



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2640

ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐ ԽՆԴԻՐՆԵՐ

և

511(076)

ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մ-84

ՐԱԿԱՆ ԳԱՍԸՆԹԱՑՔ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Խնդիրներ և օրինակներ առաջին հարիւրեկի թուերով և
ամենահասարակ կոտորակներով

Փոխադրեց

ԳՐԻԳՈՐԻՍ ՔԱՀ. ԵՐԶՆԿԵԱՆՅ

Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թույլատրուած Ս. Էջմիածնի Ուսումնարանական Յանձնա-
ժողովից:

Թ Ի Յ Լ Ի Ս

Ելեհրատարակչության «ՀԵՐԱՐԷՍ» ԸՆԿ. Մաղաթեան փող. № 5

1906

(145)

105

106

10.04.2019

10.04.2013

2640

2 SEP 2006

Կենդրոնական գրավանձառանցի հրատարակութիւն

511(076)

20 MAY 2010

ՍՈՒՍԱՆՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

457

510
37-ԵՐ

ԵՒ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Խնդիրներ և օրինակներ առաջին հարիւրեկի թուերով և ամենահասարակ կոտորակներով

1002
0416

Փոխադրվել

ԳՐԻԳՈՐԻՍ



Ա. ԵՒ Բ. ՏԱՐՐ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թույլատրուած Ս. Էջմիածնի Ուսումնարանական Յանձնա-
ժողովից:

Թ Ի Յ Լ Ի Ս

Ելիքահարկ սպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մաղաթեան փող. № 5

1906

(145)

Հ Ա Ն Գ Ո Ւ Ց Ե Ա Ն

ՄԿՐՏԻՉ ՍԱՆՊԱՐԵԱՆՅԻ

ՈՆՄՐՔ ՑԻՇԱՏԱԿԻՆ

ԵՐԱՆՏԱԳԻՏ ՍՐՏՈՎ

ՆՈՒՐՈՒՄ Է

ԻՆՏ ՈՐԴԵՅԻՐԸ

Дозволено цензурою Тифлисть, 4 февраля 1906 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԼՈՍՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՆԵՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԼՈՍՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՆԵՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԼՈՍՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՆԵՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԼՈՍՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՆԵՔ

ԵՐԿՈՒ ԽՍՍՔ

Մոյն դասագիրքը հրատարակելով՝ մենք երկու նպատակ ենք ունեցել: Նախ՝ ուղիղ ճանապարհով հետևել թուաբանութեան ուսուցման բուն նպատակին, չ՛մոնելով աւելորդ կրկնութիւններէ, և չոր ու ցամաք թուահաշիւների մէջ, որի համար մենք բոլոր խնդիրների բովանդակութիւնը վերցրած ենք ինչպէս քաղաքային, այնպէս և գիւղական կեանքի երեխայոց ծանօթ շրջանից, առաջարկելով այնպիսի դիւրամատչելի հարցեր, որոնք ուսման առաջին և երկրորդ տարուայ աշակերտաց մտաւոր կանոնաւոր զարգացմանն կարող են կատարելապէս նպաստել:

Երկրորդ՝ թուաբանութեան ուսուցման նպատակի հետ համահաւասար կերպով մենք մեծ նշանակութիւն ենք տալիս խնդիրներին այն պատճառով, որ դոքա՛ մանաւանդ առաջին տարիներն՝ իբրև մի անգնահատելի միջոց են գեոսահաս երեխայոց կանոնաւոր և արտայայտիչ խօսակցութիւնը զարգացնելու նպատակով, որի պատճառով և՛ մենք՝ ըստ կարելւոյն՝ պատշաճաւոր ուշք ենք դարձրած բացատրութիւնների կանոնաւորութեան մասին: Մեր ներկայ ուսումնարանական կեանքը, կարծէք թէ, սորան մոռացութեան է տուած: Այս կետը ուշադրութեան արժանի է:

Մոյն ուղղութիւնը և ոճը վերցրած ենք ուսուց

մէջ այժմ առաջին տեղ բռնած Գողգէնբերդի դասագրքից, որից և մենք փոխադրաբար օգտուեցինք՝ շատ փոփոխութիւններ անելով և բոլորովին ինչո՞ւրո՞յն չէր պաշտօն մեր գիւղական և չաղայայն ճանաչող հետնի պայմանների համաչափ:

Ներկայ թուաբանական խնդիրները ժողովածուն երկու բաժին է արած: Առաջին բաժնում, գործողութեանց համեմատ, խնդիրներն են ներկայացրած հետևեալ դասաւորութեամբ. ա) խնդիրներ՝ առաջին տասնեկի թուերով, բ) առաջին հարիւրեկի տասնեակներով և գ) առաջին հարիւրեկի թուերով. իսկ երկրորդ բաժինը կազմում են միայն օրինակները, որոնց մէջ ևս շատ յաւելումներ ենք արած: Չեռնամուխ լինելով իններորդ տպագրութեանն և ընդհանրապէս անփոփոխ պահպանելով նախընթաց տպագրութեանց բնագիրն, մենք միայն մի քանի մասնաւոր փոփոխութիւններ ենք արել: Նախ՝ հեռացրել ենք այն բոլոր թերութիւնները, որոնք նախընթաց տպագրութիւնների ժամանակն են եղել: Երկրորդ՝ առարկայի դասաւանդումն առաւել կենդանի և արդիւնաւոր կացուցանելու համար ծանօթութիւնների մէջ յիշել ենք մի քանի տեղական չափեր, որոնք մեծ մասամբ գործ են ածւում Թիֆլիզի նահանգում. դոքա, որպէս օրինակ, ուսանական չափերի հետ մօտաւորապէս համեմատելու նպատակաւ են յառաջ բերուած: Յանկալի կ'լինի, որ իւրաքանչիւր դասատու-ուսուցիչ ևս նոյն ձևով հրահանգուի, առայժմ իւրեանց տեղական չափերն 'ի նրկատի ունենալով, մինչև որ մեզ կ'յաջողի մեր բոլոր տեղական չափերի համար մի ընդհանուր համակարգութիւն (սխտեմ) կազմել:

Տպագրուած է սոյն դասագրքի և՛ երկրորդ մասը՝

երրորդ և չորրորդ տարուայ համար, որը առաջինի հետ միասին միգասեան և երկգասեան տարրական ուսումնարանի մէջ թուաբանութեան ուսուցման մի ամբողջ շրջանն է կազմում:—

Այժմ, աւելորդ համարելով միգասեան և երկգասեան դպրոցի մէջ թուաբանութեան ուսուցման մեր առաջարկած ձևի, ուղղութեան և ոճի առաւելութեանց մասին խօսել, մենք առաջարկում ենք մեր կազմած դասագրքերը մեր դպրոցների բանիմաց ուսուցիչներին արդի ճանաչարժողան խելացի պահանջներին համեմատ գործարկելու, ընդ սմին և՛— սպասում ենք արդիւնաւէտ արգասեաց:—

Գ. ք. Երզնկեանց

1 Փետրուարի 1906 թ.

Թիֆլիզ.

ԱՌԱՋԻՆ ԲԱՓԻՆ.

Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր.

ԽՆԳԻՐՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԵԿԻ ԹՈՒՆԵՐՈՎ:

Գ Ո Ի Մ Ա Ր Ո Ի Մ Ն:

1. Ուսուցիչը աշակերտին առաջ մէկ գրիչ տուեց, իսկ յետոյ էլ՝ հինգ գրիչ: Աշակերտը ընդամենը քանի գրիչ ստացաւ:

2. Մի աղջիկ ունէր՝ չորս թերթ սպիտակ և չորս թերթ մոխրագոյն թուղթ: Նա ընդամենը քանի թերթ թուղթ ունէր:

3. Մի տղայ երեք կարմրախայտ բռնեց, իսկ միւսը — եօթը: Երկուսը միասին քանի կարմրախայտ բռնեցին:

3. Մի գիւղացի երկու տղայ և երեք աղջիկ ունէր. նա ընդամենը քանի որդի ունէր:

5. Ներկարարը առաջ մէկ դուռը ներկեց, իսկ յետոյ էլ — ութ: Նա ընդամենը քանի դուռը ներկեց:

6. Պարտէզումը կայ՝ երեք թուփ կարմիր և երեք թուփ սև հազարջի: Ընդամենը քանի թուփ հազարջի կայ:

7. Դատարկ շիշը մէկ գրուանքայ է քաշում. նրա մէջ չորս գրուանքայ իւղ ամեցին: Իւղով լի շիշը քանի գրուանքայ կը քաշէ:

8. Պահարանի ներքևի թարէքի վերայ ութ գիրք կայ, իսկ վերևումը — երկու: Երկուսի վերայ քանի գիրք կայ:

9. Պարտիզպանը պատուաստեց՝ մէկ խնձորենի և երեք կեռասենի: Նա ընդամենը քանի ծառ պատուաստեց:

10. Մի անուագործ շինեց՝ երկու երկար և վեց կարճ ճաղ: Նա բոլորը քանի ճաղ շինեց:

11. Հովիւը ոչխար խուզելու համար հինգ մկրատ ունէր. նա գնեց դարձեալ հինգ հատ: Հովիւը ընդամենը քանի մկրատ ունեցաւ:

12. Վառարան շինողը մի վառարանի նորոգութեան համար երեք աղիւս գործածեց, իսկ միւսի համար—եօթը: Երկու վառարանի նորոգութեան համար քանի աղիւս գնաց:

13. Հայրը չորս խտիր հիւսեց, իսկ որդին—հինգ: Նոքա միասին քանի խտիր հիւսեցին:

14. Հաւ առնողը մի գիւղացի կնոջից վեց հաւ առաւ, իսկ միւսից—չորս: Նա ընդամենը քանի հաւ առաւ:

15. Մի գիւղացի շինեց երեք հացի և երկու ուռի լըծներ: Նա ընդամենը քանի լուծ շինեց:

16. Ուսուցիչը գնեց մի հատ կապոյտ և ինն հատ սև մատիտ: Նա ընդամենը քանի մատիտ գնեց:

17. Փոքր քոյրը երեք իլիկ թել մանեց, իսկ մեծը—եօթը: Քանի իլիկ թել մանեցին երկու քոյրը միասին:

18. Երկու եղբայր ընկերացան և տետրակներ գնեցին. մէկ եղբայրը տուեց երեք կոպէկ, իսկ միւսը—հինգ: Նոքա տետրակներին օրքան վճարեցին:

19. Գիւղացին երկու ջուալի մէջ ցորեն ածեց. մէկ ջուալի մէջ չորս չեովերիկ*) մտաւ, իսկ միւսի մէջ—երեք: Յորենը ընդամենը քանի չեովերիկ էր:

20. Մի մեծ ճանապարհի վերայ երեք գիւղ կայ. առաջին գիւղից մինչև երկրորդը վեց վերստ է, իսկ երկրորդից մինչև երրորդը—երեք: Քանի վերստ է առաջին գիւղից մինչև երրորդը:

21. Նաւի պարանը երկու կտոր արին. մի կտորը հինգ արշին դուրս եկաւ, իսկ միւսը—չորս: Պարանը ինչ երկարութիւն ունէր:

22. Մի կարանող կին երիզը երկու կտոր արեց. մի կտորի երկարութիւնը երկու արշին եղաւ, իսկ միւսինը—ութ: Երիզը ինչ երկարութիւն ունէր:

23. Մի մանուկ երկու պղնձեայ դրամ ունէր. մէկը եր-

*) Չեովերիկը մէկ փթից փոքր ինչ աւելի է և հաւասար կօթին:

կու կոպէկանոց էր, իսկ միւսը—երեք. այդ փողերը մի արծաթեայ դրամի հետ փոխեց: Նա ինչպիսի արծաթեայ դրամ ստացաւ:

24. Երջավաճառը մի գրուանքայ շաքարահաց ծախեց և երեք կոպէկ աշխատեց. այդ շաքարահացերի գրուանքան նըրան հինգ կոպէկ էր նստել: Նաքարահացի գրուանքան քանի կոպէկով ծախեց:

25. Մի գիւղացի կին չորս կոպէկի ասեղ գնեց. դորա համար նա մի արծաթի դրամ վճարեց, որից միայն վեց կոպէկ յետ ստացաւ: Նա ինչպիսի արծաթի դրամ էր տուել:

26. Կալուածատիրոջ մի գոմուս չորս ձի կայ, իսկ միւսում—երկու: Նա երկու գոմում քանի ձի ունի:

27. Աշակերտին պատուիրած էին քրթից մի քանի բառ արտագրել. նա առաջ երկու բառ արտագրեց, իսկ յետոյ՝ մնացած եօթը: Աշակերտին քանի բառ էր սուսած արտագրելու:

28. Մի երեխայ վեց կոպէկ մսխեց և դարձեալ նորա մօտ չորս կոպէկ մնաց: Նա քանի կոպէկ ունէր:

29. Մարգագետնի վերայ մի քանի դէղ չորս խոտ կար. երբ որ վեց դէղ տարան, այն ժամանակ դարձեալ երկու դէղ մնաց: Մարգագետնի վերայ քանի դէղ խոտ կար:

Հ Ա Ն Ո Ի Մ Ն:

30. Մի գիւղացի չորս գերան ունէր. երկու գերանից նա տախտակներ քաշեց: Նորա մօտ դարձեալ քանի գերան մնաց:

31. Մի ծառայ եօթն ամսով վարձուեց և իւր տիրոջը միայն չորս ամիս ծառայեց: Նա դարձեալ քանի ամիս պէտք է ծառայէր:

32. Մի թռչնորս ութ կաքաւ ունէր. չորսը ծախեց: Նորա մօտ դարձեալ քանի կաքաւ մնաց:

33. Փոքրիկ շէն մէջ եօթը գդալ դեղ կար, հիւանդը երեք գդալ խմեց: Դարձեալ քանի գդալ դեղ մնաց:

34. Գիւղացին եօթը հատ ոչխարի մորթի ունէր. կի-

սամուշտակի համար հինգը բանացրեց: Նորա մօտ քանի մորթի մնաց:

35. Մի խոհարար կին ութ կոպէկի գազար գնեց. նա դորա համար տասը կոպէկանոց տուեց: Քանի կոպէկ յետ ըստացաւ:

36. Կալուածատէրը իւր բանուորները համար հինգ խրճիթ շինել տուեց. երկուսը տախտակով ծածկեց, իսկ մնացեալները՝ ծղնոտով: Նա ծղնոտով քանի՞ խրճիթ ծածկել տուեց:

37. Մի բանջարանոցում ութ ամու կայ. երեքը գետնախնձոր*) է ցանած, իսկ մնացածները կաղամբ: Քանի ամու կաղամբ է ցանած:

38. Մի տուն ինն սենեակ ունի. վեցումը կենդանի կան, իսկ մնացածները դատարկ են: Քանի սենեակ է դատարկ:

39. Երեխան ութ պատկեր ունէր. երկուսը ընծայեց եղբօրը, իսկ մնացածները — քրոջը: Քոյրը քանի պատկեր ստացաւ:

40. Ատաղձագործը ութ տախտակ ունէր. հինգը նստաբանների համար գործածեց: Նորա մօտ դարձեալ քանի տախտակ մնաց:

41. Մի գիւղացի տասը պարկ շաղգամ հանեց. վեց պարկը ծախեց: Նորա մօտ դարձեալ քանի պարկ շաղգամ մնաց:

42. Իւրով լի շիշը վեց գրուանքայ է քաշում, իսկ առանց իւղի—երեք: Քանի գրուանքայ իւղ կայ շիշ մէջ:

43. Քաղցրաւենիով (մուրաբայով) լի ամանը ինն գրուանքայ է քաշում, իսկ առանց քաղցրաւենու — երկու: Քանի գրուանքայ է քաղցրաւենին:

44. Մի գիւղացի կին տասը կոպէկի շաքար և աղ գընեց. աղի համար երկու կոպէկ վճարեց: Նա քանի կոպէկ տուեց շաքարին:

45. Մի պաստառագործ գահաւորակ և աթոռներ ծածկելու համար ինն արշին մոմշոր (կլիօնկայ) գործածեց. գա-

*) Կարտոֆիլի նման պտուղ է, որը ուտում են առանց եփելու:

հաւորակի համար չորս արշին գնաց: Աթոռներին քանի արշին մոմշոր գնաց:

46. Հայր և որդի միասին եօթը հատ սկան գունդ շինեցին. որդին երկուսը շինեց: Քանի գունդ շինեց հայրը:

47. Վաճառականը չիթ արշինը գնեց եօթը կոպէկով, իսկ ծախեց տասնով: Նա սրբան աշխատեց:

48. Խանութպանը կողակ ձկների հատը գնեց չորս կոպէկով, իսկ ծախեց՝ վեցով: Իւրաքանչիւր կողակի ծախելուց նա քանի կոպէկ օգուտ ստացաւ:

49. Մի երեխայ տասը կոպէկանոցը երկու դրամներով մանրացրեց, մինը հինգ կոպէկանոց էր: Միւս դրամը քանիսնոց էր:

50. Պղնձագործը ինն թերթ պղինձ ունէր. երբ որ մի քանի թերթերից կաթսաներ պատրաստեց, նորա մօտ դարձեալ երեք թերթ պղինձ մնաց: Նա կաթսաների համար քանի թերթ պղինձ գործածեց:

51. Գիւղացին մի հատ տասը կոպէկանոց ունէր. երբ որ նա այդ փողերից մի քանի կոպէկ մեխ գնելու համար ծախեց, այն ժամանակ նորա մօտ դարձեալ վեց կոպէկ մընաց: Գիւղացին քանի կոպէկ վճարեց մեխերին:

52. Մի գիւղում ինն տուն կար. հրդեհից յետոյ միայն հինգը մնաց: Քանի տուն այրուեց:

53. Մի երեխայ մի քանի գրիչ ունէր. երբոր հօրից ստացաւ և հինգ հատ, այն ժամանակ ութ գրիչ ունեցաւ: Նա քանի գրիչ ունէր:

54. Տեփուրի վերայ մի քանի ձու կար. երբ որ այնտեղ դարձեալ երկուսը դրին, այն ժամանակ բոլորը վեց ձու եղաւ: Տեփուրի վերայ քանի ձու կար:

55. Կաշեգործը մի քանի կաշի ունէր. երբոր չորս հատ ևս գնեց, այն ժամանակ ընդամենը տասը կաշի ունեցաւ: Նա քանի կաշի ունէր:

56. Դասատան մէջ եօթն աշակերտներ կային. երբ որ մի քանի նորեկներ ևս եկան, այն ժամանակ բոլորն ինն հոգի եղան: Քանի՞ նոր աշակերտներ եկան:

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ԵՒ ՀԱՆՈՒՄՆ:

57. Մի աղջիկ տասը թերթ թուղթ ունէր. չորս թերթ գործածեց՝ մէկ տետրակի և հինգ թերթ էլ—միւս տետրակի համար: Քանի թերթ թուղթ մնաց աղջկայ մօտ:

58. Ուսուցիչը եօթը մատիտ բերեց դասատուն. երկու մատիտ տուեց նա մէկ աշակերտին, իսկ երեքը—միւսին: Ուսուցչի մօտ քանի մատիտ մնաց:

59. Մի խոտհարքում առաջ չորս գէջ խոտ վերտուին, յետոյ դարձեալ՝ հինգը. եօթը գէջ կրեցին: Քանի գէջ խոտ մնաց:

60. Մի տանտիկին երեք գրուանքայ բրինձ ունէր. նա չորս գրուանքայ ևս գնեց. հինգ գրուանքից փլաւ պատրաստեց: Քանի գրուանքայ բրինձ մնաց նորա մօտ.

61. Սենեակումը ութ աթոռ կար. նրանցից հինգը տարան նորոգելու, իսկ երկու նորն էլ բերեցին: Այժմ քանի աթոռ կայ սենեակի մէջ:

62. Պարտէզումը վեց լորի ծառ կար. նոցանից չորսը հանեցին, իսկ ութ հատ էլ նոր տնկեցին: Այժմ պարտէզումը քանի լորենի կայ,

63. Մի գիւղացի կին երկուշաբթի թել մանեց երեք ժամ, երեքշաբթի—երկու ժամ, չորեքշաբթի—չորս ժամ և հինգշաբթի էլ—մի ժամ: Այդ օրերում նա ընդամենը քանի ժամ թել մանեց:

64. Մի աղայ անտառում առաջ մէկ սունկ գտաւ, յետոյ—երկուսը, յետոյ երեքը և վերջը դարձեալ՝ երկու սունկ: Նա ընդամենը քանի սունկ գտաւ:

65. Ինն արշին երկարութիւն ունեցող ձուպանից առաջ երկու արշին կտրեցին, յետոյ—երեք, վերջն էլ դարձեալ—երկու: Էլի քանի արշին ձուպան մնաց:

66. Դերձակը տասն արշին մահուդ ունէր. երեք արշին նա գործածեց՝ սերթուկի, երկուսը—վարտիկի և չորսն էլ՝ վերարկուի համար: Քանի արշին մահուդ մնաց դերձակի մօտ:

67. Ծառի վերայ ութ ագռաւ էին նստած. նոցանից վեցը թռան, իսկ յետոյ նստեցին ևս երեքը և վերջն էլ եր-

կուսը: Այժմ քանի ագռաւ կայ ծառի վրայ:

68. Մի երեխայ 10 կոպէկ ունէր. եօթը կոպէկ նա մըսխեց, իսկ յետոյ հօրից ստացաւ երկու և վերջն էլ չորս կոպէկ: Երեխան քանի կոպէկ ունեցաւ:

69. Մայրը խնձորի ծառից առաջ երեք խնձոր պոկեց, յետոյ՝ երկուսը և վերջն էլ՝ չորսը. զոցանից վեցը նա իւր որդոցը բաժանեց: Մօր մօտ քանի խնձոր մնաց:

70. Զինորսը առաջ հինգ զեղարքունի բռնեց, յետոյ երեքը. եօթը հատ ծախեց, իսկ ինն էլ նորից բռնեց: Այժմ նա քանի զեղարքունի ունի:

71. Մի գիւղացի առաջ չորս ցից պատրաստեց, յետոյ՝ երեքը և վերջն էլ՝ երկուսը. հինգ հատ ցանկապատի նորոգութեան համար գործածեց: Նորա մօտ դարձեալ քանի ցից մնաց:

72. Մի գոմում երկու կով կայ, միւսում՝ չորս, իսկ երրորդում՝ դարձեալ երկու. դոցանից երեքը սատկեցին: Քանիսը մնացին կենդանի:

73. Մի ներկարար տասը գրուանքայ կաւիճ ունէր. ներկ եփելու համար առաջ երեք գրուանքայ գործածեց, յետոյ՝ դարձեալ չորսը, իսկ վերջն էլ նորից վեց գրուանքայ գնեց: Նա քանի գրուանքայ կաւիճ ունի:

74. Մի տանտիկին ինն գրուանքայ շաքար ունէր. նա այդ շաքարից առաջ գործածեց՝ երկու և յետոյ՝ հինգ գրուանքայ, իսկ նորից ութ գրուանքայ ևս գնեց: Տանտիկինը քանի գրուանքայ շաքար ունեցաւ:

75. Մի երեխայ երկու տեսակ դրամ ունէր. մինը հինգ կոպէկանոց էր, իսկ միւսը—երեք. նա չորս կոպէկով միւրդ առաւ, իսկ երկուսով—շաքարահաց: Երեխայի մօտ դարձեալ քանի կոպէկ մնաց:

76. Տակաւի մէջ երկու դոյլ ջուր կար. նորա վերայ դարձեալ ութ դոյլ ջուր անեցին, յետոյ վերցրին չորս և վերջն էլ երեք դոյլ ջուր: Տակաւի մէջ քանի դոյլ ջուր մնաց:

77. Քարեգրիչը մի կոպէկ արժէ. մատիտը քարեգրչից չորս կոպէկով թանգ: Ի՞նչքան արժէ մատիտը:



1001
ՕԿԼԵ

- 78. Բնածարպի (կարտոֆիլի) մոմը ութ կոպէկ արժէ. ճրագուի մոմը բնածարպի մոմից չորս կոպէկով արժան է: ճրագուի մոմը ԹՆՀՔԱՆ արժէ:
- 79. Գիւղացու տունը սրահից հինգ արշին բարձր է. սրահի բարձրութիւնը չորս արշին է: Տունը ԹՆՀ ըարձրութիւն ունի:
- 80. Մարաքը գոմից երեք արշին ցածր է. գոմի բարձրութիւնը վեց արշին է: Ի՞նչ ըարձրութիւն ունի մարաքը:
- 81. Աշտանակը երկու գրուանքայ է քաշում. կաթսան վեց գրուանքայով աշտանակից ծանր է: Ի՞նչքան է քաշում կաթսան:
- 82. Կոնքը հօթը գրուանքայ է քաշում. սրճամանը կոնքից հինգ գրուանքայով թեթև է: Ի՞նչքան է քաշում սրճամանը.
- 83. Եղենեայ տախտակի երկարութիւնը հօթն արշին է. սոճու տախտակի երկարութիւնը երկու արշինով եղենու տախտակից աւելի է: Սոճու տախտակը ԹՆՀ երկարութիւն ունի:
- 84. Մի տանտիկին երկու պարան ունի. առաջինի երկարութիւնը տասն արշին է, իսկ երկրորդն երկու արշինով առաջինից կարճ է: Երկրորդ պարանը ԹՆՀ երկարութիւն ունի.
- 85. Քոյրը եղբորից երեք տարով փոքր է. եղբայրը ութ տարեկան է: Քանի տարեկան է քոյրը:
- 86. Եղբայրը քրոջից ութ տարով մեծ է. քոյրն երկու տարեկան է: Քանի տարեկան է եղբայրը:
- 87. Գիւղից մինչև քաղաք հինգ վերստ է. գիւղաքաղաքը երեք վերստով աւելի հեռու է քաղաքից, քան թէ գիւղը: Գիւղաքաղաքից մինչև քաղաք քանի վերստ է:
- 88. Կալուածատիրոջ տանից մինչև փոստի կայարանը՝ խճեայ ճանապարհով՝ հօթը վերստ է, իսկ հասարակ ճանապարհով—երեք վերստ սօտիկ է: Կալուածատիրոջ տանից մինչև փոստի կայարանը՝ հասարակ ճանապարհով՝ քանի վերստ է:
- 89. Դասատանն առաջին նստարանի վերայ չորս աշա-

- կերա է նստած, իսկ երկրորդի վերայ երկու աշակերտ աւելի: Քանի աշակերտ է նստած երկրորդ նստարանի վերայ:
- 90. Սենեակի երկարութիւնը ութ արշին է, իսկ լայնութիւնը երկարութիւնից երկու արշին պակաս է: Սենեակն ԹՆՀ լայնութիւն ունի:
- 91. Մի կօշկահար առաջին կաշուց երկու հատ կօշիկի ճիւղ կտրեց, իսկ երկրորդից՝ չորս հատ աւելի: Նա երկրորդ կաշուց քանի ճիւղ կտրեց:
- 92. Մի հիւսն ուսուսմարանի փոքր բաժանման համար տասը նստարան շինեց, իսկ մեծ բաժանման համար՝ ութ նստարան պակաս: Մեծ բաժանման համար նա քանի նրստարան շինեց:
- 93. Գիւղացին երկու ցանկապատ շինեց՝ առաջինը ինն արշին, իսկ երկրորդը վեց արշին՝ երկարութեամբ: Առաջին ցանկապատը երկրորդից ԹՆՀքանով է երկար:
- 94. Շրջավաճառը խնձորի հատը երկու կոպէկով է ծախում, իսկ տանձի հատը՝ հինգ կոպէկով: Խնձոր տանձից ԹՆՀքանով է արժան:
- 95. Կաթսան վեց գրուանքայ է քաշում, իսկ հարթուկը—չորս: Կաթսան հարթուկից ԹՆՀքանով է ծանր:
- 96. Հայրը մեծ որդուն երկու շահանոց տուեց, իսկ փոքր որդուն՝ մի հատ հինգ կոպէկանոց: Որդկերանցից ո՞րը քիչ ստացաւ, և ԹՆՀքանով քիչ:
- 97. Մայրն անտառում ութ աւել քաղեց, իսկ պղծիկը—վեց: Նոցանից ո՞վ քիչ քաղեց և ո՞րքանով քիչ:
- 98. Մի ապակի ձգող քարեայ տան մէջ տասն ապակի ձգեց, իսկ փայտեայ տանը—հօթը: Ո՞ր տանը շատ ապակի ձգեց և այն էլ ԹՆՀքան աւելի:
- 99. Ատաղձագործը երեք տախտակ ունի. առաջինի երկարութիւնը հինգ արշին է, երկրորդինը՝ երկու արշինով առաջինից երկար, իսկ երրորդինը՝ երեք արշինով երկրորդից նոյնպէս երկար: Ի՞նչ երկարութիւն ունի երրորդ տախտակը:
- 100. Մեծ եղբայրը տասը տարեկան է. միջնակը նրանից փոքր է՝ չորս տարով, իսկ կրտսերը միջնակից՝ երեք

տարով: Կրտսեր եղբայրը քանի տարեկան է:

101. Ուսումնարանի փոքր բաժանման մէջ ինն նստարան կայ: միջին բաժանմունքում—չորս նստարան փոքրից պակաս, իսկ մեծ բաժանմունքում՝ երկու նստարան միջինից նոյնպէս պակաս: Քանի նստարան կայ մեծ բաժանման մէջ:

102. Կաթսան վեց գրուանքայ է քաշում. հեշտահուր նրանից չորս գրուանքայ ծանր է, իսկ մատուցարանը հեշտահուր ութ գրուանքով թեթե: Մատուցարանը քանի գրուանքայ է քաշում:

103. Տան բարձրութիւնը տասն արշին է. բակի պատը տանից եօթն արշին ցածր է, իսկ ամբարը բակի պատից բարձր է երկու արշին: Ամբարի բարձրութիւնը քանի արշին է:

104. Կարաւանը առաջին ժամում չորս վերստ անցկացաւ, երկրորդ ժամում՝ առաջուանից երկու վերստ աւելի: Այդ երկու ժամում կարաւանը քանի վերստ անցկացաւ:

105. Երկրագործը մի արտում եօթը չհավերիկ ցորեն ցանեց, իսկ միւսում՝ հինգ չհավերիկ պակաս: Նա երկու արտում քանի չհավերիկ ցորեն ցանեց:

106 Մի երեխայ առաջին անգամ երկու թիթեռ բռնեց, երկրորդ անգամ—երեք, երրորդ անգամ՝ երկրորդից՝ երկուսով աւելի: Նա ընդամենը քանի թիթեռ բռնեց:

107. Կալուծատէրը առաջին գոմում երկու ձի ունի, երկրորդում—հինգ, իսկ երրորդում՝ երկրորդից՝ երեքով պակաս: Նա քանի ձի ունի երրորդ գոմի մէջ:

108. Մի վարպետ երեք կապոց պղնձի թել ունի. առաջին կապոցի թելի երկարութիւնը վեց արշին է, երկրորդինը—երեք, իսկ երրորդինը՝ չորս արշին պակաս առաջուայ երկուսից: Երրորդ կապոցում քանի արշին պղնձի թել կայ:

109. Թէյամանը ութ գրուանքայ է քաշում, շերեփը—վեց, իսկ աշտանակը շերեփից չորս գրուանքայ թեթե է: Թէյամանը աշտանակից ինչքանով է ծանր:

110. Առաջին թարեքի վերայ երկու գիրք կայ, երկրորդի վերայ՝ դրանից երկուսով աւելի, երրորդի վերայ՝ երկրորդից՝ երեքով աւելի և չորրորդի վերայ էլ երրորդից

երկուսով նոյնպէս աւելի: Չորրորդ թարեքի վերայ քանի գիրք կայ:

111. Մի աղջիկ գրքից երկուշաբթի տասը տող արտագրեց, երեքշաբթի՝ երկուշաբթի օրուանից երկու տող պակաս, հինգշաբթի՝ չորեքշաբթի օրուանից երեք տող նոյնպէս պակաս: Նա հինգշաբթի օրը քանի տող արտագրեց:

112. Պղնձգործը չորս թերթ պղինձ ունի. առաջինը երեք գրուանքայ է քաշում, երկրորդը՝ առաջինից երկու գրուանքայով աւելի է, երրորդը՝ երկրորդից հինգ գրուանքայով նոյնպէս աւելի, իսկ չորրորդն էլ երրորդից երեք գրուանքայով թեթե է: Չորրորդ թերթը ինչքան է քաշում:

113. Մի մշակ ութ խուրճ ցորեն հնձեց, երկրորդը՝ առաջինից երկու խրճնով աւելի, երրորդը՝ երկրորդից երեքով պակաս, իսկ չորրորդն էլ՝ երրորդից երկուսով նոյնպէս պակաս: Չորրորդ մշակը քանի խուրճ ցորեն հնձեց:

114. Առաջին դաշտում վեց արտ ցորեն է ցանած, երկրորդում՝ չորսով պակաս, իսկ երրորդում՝ առաջինից հինգով նոյնպէս պակաս: Այդ երեք դաշտում քանի արտ ցորեն կայ ցանած:

115. Կալուծատէրը առաջին գիւղից երեք խոտ հարող վարձեց, երկրորդից՝ երկուսով պակաս, երրորդից— երեքով առաջինից աւելի: Նա ընդամենը քանի խոտ հարող վարձեց:

Բ Ա Ձ Մ Ա Պ Ա Տ Կ Ո Ի Մ Ն :

116. Մի աղջիկ երկու ասեղ գնեց, իւրաքանչիւրը մէկ կոպէկով: Նա քանի կոպէկ մսխեց:

117. Հովիւը օրէնը երկու տրեխ է անում: Նա քանի տրեխ կ'անէ երկու օրում:

118. Մի տանտիկին երկու հատ երեքկոպէկանոց բլիթ գնեց: Նա ընդամենը ինչքան փող տուեց:

119. Մի պատից երկու կարգ պատկերներ էին քաշարած, իւրաքանչիւր կարգում չորս հատ: Ընդամենը քանի պատկեր էր քաշարած:

120. Մի գիւղացի կին երկու կով ունի. նոցանից իւ-

բաբանչիւրը ամսական հինգ դոյլ կաթն է տալիս: Երկու կովը մի ամսում ինչքան կաթն են տալիս:

121. Մի կին երեք թփից մոր քաղեց, իւրաքանչիւրից՝ երկու գրուանքայ: Նորա քաղած մորը քանի գրուանքայ է:

122. Մի գիւղացի կարտոֆիլը երեք պարկի մէջ ածեց. իւրաքանչիւրում երեք չեալերիկ: Պարկերի մէջ ածած կարտոֆիլը քանի չեալերիկ է:

123. Արհեստաւորը օրական երկու փոքրիկ տակառ է շինում: Նա չորս օրում քանիսը կը շինէ:

124. Մի մարդ հինգ մշակ ունի. ամեն մէկը ճաշի համար երկու գրուանքայ հաց է ստանում: Բոլոր մշակների համար ճաշին ռըքան հաց է գնում:

125. Պայտաուը երկու ձի պայտեց, իւրաքանչիւրի երկու ոտը: Նա ընդամենը քանի պայտ գործածեց:

126. Տակառագործը երեք տակառին օղակներ հագցրեց, իւրաքանչիւրին՝ երեք հատ: Նա ընդամենը քանի օղակ հագցրեց:

127. Մի դերձակ կին երկու սաւան կարեց, իւրաքանչիւր սաւանի համար նա չորս արշին քաթան գործածեց: Քանի արշին քաթան գնաց սաւաններին:

128. Տանտիկինը երեք հատ փայտեայ գդալ գնեց, իւրաքանչիւրը երկու կոպէկով: Նա ընդամենը որքան փող լիսեց:

129. Գիւղացին իւր տանից մինչև փոստի կայարանը երկու ժամում գնաց. իւրաքանչիւր ժամում նա անցկացաւ հինգ վերստ: Գիւղացու տանից մինչև փոստի կայարանը քանի վերստ է:

130. Մի պարան երկու հաւասար կտոր արեցին. իւրաքանչիւր կտորը երեք արշին դուրս եկաւ: Ամբողջ պարանը ի՞նչ երկարութիւն ունէր:

131. Դասատուն բերած բոլոր քարեգրիչները ուսուցիչը չորս աշակերտի մէջ բաժանեց, իւրաքանչիւրին երկ-երկու հատ: Նա քանի քարեգրիչ բերեց դասատուն:

132. Գիւղացին իւր զրացուց գարի փոխ առաւ. նա

իւր պարտքի կէսը վճարեց՝ երեք չեալերիկ տալով: Գիւղացին ինչքան գարի է փոխ առել:

133. Սենեակի երկարութեան երրորդ մասը երեք արշին է: Ի՞նչ երկարութիւն ունի սենեակը:

134. Բոլոր առնուած շաքարահացերի հինգերորդ մասը երկու շաքարահաց է: Քանի շաքարահաց է առնուած:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն:

135. Երկու եղբայր միմեանց մէջ հաւասար կերպով չորս խնձոր բաժանեցին: Իւրաքանչիւրին որքան բաժին ընկաւ:

136. Սեղանի վերայ չորս գիրք կայ. այդ գրքերի կէսը այբբենարան է: Քանի այբբենարան կայ սեղանի վերայ:

137. Ուսուցիչը երկու աշակերտի մէջ հաւասար վեց թերթ թուղթ բաժանեց: Իւրաքանչիւր աշակերտ քանի թերթ թուղթ ստացաւ:

138. Մի գիւղացի վեց մանէթ էր պարտ. նա այդ փողի կէսը վճարեց: Ի՞նչքան էր գիւղացու վճարածը:

139. Մայրը իւր երկու աղջկեանց հաւասարապէս ութ շաքարահաց բաժանեց: Իւրաքանչիւր աղջիկ քանի շաքարահաց ստացաւ:

140. Մի երեխայ ութ թերթ թուղթ ունէր. նա այդ թերթի կէսը տետրակի համար գործածեց: Ինչքան թուղթ դնաց տետրակին:

141. Շրջափաձառը երկու երեխայի վերայ հաւասար կերպով տասը վարունգ ծախեց: Իւրաքանչիւր երեխան քանի վարունգ գնեց:

142. Մի աշակերտ գրքից տասը բառ արտագրեց. այդ բառերի կէսը սխալ էր արտագրուած: Աշակերտը ուղիղ քանի բառ արտագրեց:

143. Երեք արշին երկարութիւն ունեցող պարանը երեք հաւասար մասն արին: Իւրաքանչիւր մասն ի՞նչ երկարութիւն ունեցաւ:

144. Մի երեխայ վեց ընկոյզը երեք հաւասար կիտուկ

արեց: Իւրաքանչիւր կիտուկի մէջ քանի ընկոյզ կայ:

145. Մի ձկնորս վեց ձուկը բռնեց. նոցա երրորդ մասը կապոյտներ էին: Նա քանի կապոյտ բռնեց:

146. Մի կարանոյ կին ինն արշին երկարութիւն ունեցող երիզը երեք հաւասար կտոր արեց: Իւրաքանչիւր կըտորն ինչ երկարութիւն ունեցաւ:

147. Իաշտուճը ինն արտ կայ. դոցա երրորդ մասը ցորեն է ցանած: Քանի արտ է ցորեն ցանած:

148. Ատաղձագործը չորս արշինանոց տախտակը չորս հաւասար մասն արեց: Իւրաքանչիւր մասը ինչ երկարութիւն ունեցաւ:

149. Մի աղջիկ չորս քարեգրիչ ունէր. նոցա չորրորդ մասը կոտրուեց: Կոտրուածը քանիսն է:

150. Չորս բանուր իւրեանց մէջ հաւասար կերպով ութ մանէթ բաժանեցին: Իւրաքանչիւրին ինչքան փող բաժին ընկաւ:

151. Դասատան մէջ ութ նստարան կար. նոցա չորրորդ մասը տարան նորոգելու: Քանի նստարան տարան նորոգելու:

152. Մի աղջիկ հինգ կոպէկ ունէր. այդ փողի հինգերորդ մասը նա արեւածաղկի սերմի համար մսխեց: Աղջիկը արեւածաղկի սերմի համար որքան վճարեց:

153. Դասատան միջի տասը նստարանը հինգ կարգ էր դասաւորուած, իւրաքանչիւրում հաւասար: Ամեն մի կարգում քանի նստարան կայ:

154. Մի երեխայ 40 ընկոյզը երկու կիտուկ արեց. նոցանից մէկում 20 ընկոյզ կար: Քանի ընկոյզ կար միւս կիտուկի մէջ:

155. Երկու մարդ հաւասար կերպով տասը դէզ ցորեն հնձեցին: Իւրաքանչիւրը ինչքան ցորեն հնձեց:

156. Մի աշակերտի ինն խնդիր էր տուած. այդ խնդիրներէ երրորդ մասը չլուծեց: Քանիսն են չլուծած խնդիրները:

157. Մի գիւղացի քաղաքում ութ ամիս ապրեց. նա

այդ ժամանակուայ չորրորդ մասը դռնապան էր: Գիւղացին ինչքան ժամանակ դռնապանութիւն արեց:

158. Ներկարարը երկու օրում հաւասար կերպով վեց լուսամուտ ներկեց: Նա իւրաքանչիւր օր քանի լուսամուտ ներկեց:

159. Փականագործը չորս դրուանքայ երկաթը հաւասար կերպով երկու կողպէքի համար բանեցրեց: Իւրաքանչիւր կողպէքին որքան երկաթ գնաց:

160. Մի կաթ ծախող կին ինն շիշ սերը հաւասար կերպով երեք գնողի վերայ ծախեց: Իւրաքանչիւր գնող ինչքան սեր գնեց:

161. Մի կար սնող կին ութ արշին չիթը երկու երեխայի շորի համար հաւասար կերպով գործածեց: Իւրաքանչիւր շորի համար քանի արշին չիթ գնաց:

162. Ուսուցիչը վեց կոպէկով երեք մատիտ գնեց: Իւրաքանչիւրին որքան վճարեց:

163. Մի երեխայ տասը կոպէկանոցը երկու կոպէկանոց դրամների հետ փոխեց: Նա քանի երկու կոպէկանոց ըստացաւ:

164. Տանտիկինը ութ հատ չորանոց մոմ (չորս հատը մի գրուանքայ) գնեց, Նորա գնած մոմը քանի գրուանքայ է:

165. Սենեակները պատտառելու համար տասը կտոր պատտառ գործածեցին. իւրաքանչիւր սենեակի համար հինգ կտոր գնաց: Քանի սենեակ պատտառեցին:

166. Փոքրիկ շոգինաւը մի ժամում չորս վերստ էր լուցում: Նա ութ վերստը քանի ժամում կըլողար:

167. Անտառից սալերով ինն գերան բերին. իւրաքանչիւր սայլի վերայ երեք գերան կար: Բոլոր գերանները քանի սայլով բերին:

168. Մի մշակ գաշտը երկ-երկու սայլ աղբը տարաւ. բոլոր տարածը ութ սայլ էր: Նա բոլոր աղբը քանի անգամ կրեց:

169. Պայտառը ձիանը պայտելու համար չորս պայտ գործածեց. իւրաքանչիւր ձիու համար երկու պայտ գնաց: Նա քանի ձի պայտեց:

170. Գիւղացին վեց չեովերիկ ցորենը շուախների մէջ
ածեց. իւրաքանչիւր շուախն երեք չեովերիկ մտաւ: Նա ցո-
րենը քանի՞ շուախի մէջ ածեց:

171. Մի գիւղացի կին վեց կոպէկով կապոյտ ձկներ
գնեց. իւրաքանչիւրը—երկու կոպէկով: Նա քանի՞ կապոյտ
գնեց:

172. Մի մշակ շաբթէնը երկու մանէթ յետ գցեց և
այդպիսով ընդամենը տասը մանէթ հաւաքեց: Նա այդ փողը
քանի՞ շաբթուս հաւաքեց:

ԲԱԶՄԱՊԱՏ ՈՒՄՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ:

173. Մի տակառագործ օրէնը մի տաշտ է շինուում: Եր-
կու տակառագործ հինգ օրում քանի՞ այդպիսի տաշտ կ'շինեն:

174. Մայրը իւր երկու աղջկերանց համար երկ-երկու
գոգնոց կարեց. իւրաքանչիւր գոգնոցին երկու արշին քա-
թան գնաց: Նա բոլոր գոգնոցների համար քանի՞ արշին
քաթան գործածեց:

175. Երկու թել մանող կին երեք օրում՝ հաւասար կեր-
պով վեց իւրիկ թել մանեցին: Իւրաքանչիւր կին օրէնը ի՞նչ-
քան թել էր մանուում:

176. Երկու հիւսն երկու օրում հաւասարապէս ութ
սեղան շինեցին: Օրէնը քանի սեղան էր շինուում իւրաքան-
չիւրը:

177. Մի թռչնորս երեք զոյգ կաքաւ բռնեց և դոցա
հաւասարապէս երկու վանդակի մէջ դրեց: Նա իւրաքան-
չիւր վանդակում քանի՞ կաքաւ դրեց:

178. Կալուածատէրը երկու մարգագետնի վերայ երեք—
երեք դէզ չոր խոտ ունէր. նա այդ խոտի կէսը ծախեց:
Մախածը քանի՞ դէզ էր:

179. Մի աղջիկ վեց կոպէկ ունէր. նա այդ փողի եր-
րորդ մասով շաքարահացեր գնեց, մինը մի կոպէկով: Աղ-
ջիկը քանի՞ շաքարահաց գնեց:

180. Տանտիկինը ութ գրուանքայ ալիւր ունէր. նա
բոլոր ալիւրի կիսից բլիթներ թխեց. իւրաքանչիւր բլիթի

համար երկու գրուանքայ ալիւր գործածեց: Նա քանի՞ բլ-
թի թխեց:

181. Երեք եղբայր միմեանց մէջ հաւասար կերպով
ինն ընկոյզ բաժանեցին: Ի՞նչքան ընկոյզ ընկաւ երկու եղբորը:

182. Տասը գրուանքայ նաւթը հաւասարապէս հինգ
լապտերի մէջ ածեցին: Ի՞նչքան նաւթ մտաւ երկուսի մէջ:

183. Մի աշակերտ գրքից տետրակի մէջ չորս տող
արտագրեց. գրքի իւրաքանչիւր երկու տողը նա տեղաւորեց
տետրակի չորս տողում: Աշակերտը տետրակի մէջ քանի՞
տող գրեց:

184. Դերձակը ութ արշին մահուդից բաճկոններ կարեց.
Իւրաքանչիւր չորս արշին մահուդից հինգ բաճկոն դուրս
եկաւ: Նա ընդամենը քանի՞ բաճկոն կարեց:

185. Մի երեխայ տասը խնձոր գնեց. հինգ խնձորը
նորան չորս կոպէկ նստեց: Նա խնձորների համար ի՞նչքան
վճարեց:

186. Գրչակոթը երկու կոպէկ արժէ, իսկ թանաքա-
մանը հինգ անգամ քանից է գրչակոթից: Թանաքամանը ի՞նչ-
քան արժէ:

187. Տետրակը վեց կոպէկ արժէ, իսկ մատիտը երեք
անգամ արժան էնորանից: Մատիտը ի՞նչքան արժէ:

188. Գոմի երկարութիւնը չորս արշին է. փարախը
երկու անգամ գոմից երկար է: Փարախը ի՞նչ երկարութիւն
ունի:

189. Դասատան երկարութիւնը տասն արշին է. նա-
խասնեակը երկու անգամ դասատանից կարճ է: Նախասն-
եակը ի՞նչ երկարութիւն ունի:

190. Պիսիճեայ պնակը երկու գրուանքայ է քաշում.
մատուցարանը նրանից երեք անգամ ծանր է: Մատուցարա-
նը ի՞նչքան է քաշում:

191. Հեշտաեռը ութ գրուանքայ է քաշում. սրճամանը
նորանից չորս անգամ քերել է: Սրճամանը ի՞նչքան է քաշում:

192. Մի երեխայ ունի՝ մի թերթ սպիտակ և հինգ ան-
գամ էլ շատ՝ մոխրագոյն թուղթ: Նա ի՞նչքան մոխրագոյն
թուղթ ունի:

193. Տանտիկինը ունի՝ ինն ճրագուի և երեք անգամ էլ պակաս՝ բնածարպի (կարտոֆիլի) մոմ: Նա ի՞նչքան բնածարպի մոմ ունի:

194. Մի խոհարար կին գնեց՝ երկու գրուանքայ հորթի և չորս անգամ աւելի՝ տաւարի միս: Նա ի՞նչքան տաւարի միս գնեց:

195. Մի գիւղացի կին մանեց՝ ութ գրուանքայ հաստ և երկու անգամ էլ պակաս՝ բարակ թել: Նա ի՞նչքան բարակ թել մանեց:

196. Նեղ փողոցի ձախ կողմը երեք տուն կայ, իսկ աջ կողմը—երեք անգամ աւելի: Նեղ փողոցի աջ կողմը քանի՞ տուն կայ:

197. Մի աղջիկ առաջին անգամ վեց թիթեռ բռնեց, իսկ երկրորդ անգամ—վեց անգամ պակաս. երկրորդ անգամուայ բռնածը քանի՞ թիթեռ է:

198. Տետրակը տասը կողէկ արժէ, իսկ մատիսը—հինգ: Տետրակը մատիսից քանի՞ անգամ է թանկ:

199. Պահարանի բարձրութիւնը չորս արշին է, իսկ սեղանի բարձրութիւնը՝ երկու: Պահարանը սեղանից քանի՞ անգամ է բարձր:

200. Մի գիւղացի ունի՝ ինն հատ թուխ և երեք հատ մոխրագոյն ոչխար: Նորա թուխ ոչխարները մոխրագոյններից քանի՞ անգամ շատ են:

201. Տանտիկինը գնեց՝ վեց գրուանքայ խոշոր և երկու գրուանքայ մանր բրինձ: Մանր բրինձը խոշորից էանի՞ անգամ քիչ գնեց:

ԽՆԴԻՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

202. Մի գիւղացի կին առաջ երեք ծաղկաւել քաղեց, իսկ յետոյ երկու գոյգ: Նա ընդամենը քանի՞ ծաղկաւել քաղեց:

203. Զրամանումը ինն դոյլ ջուր կար. նորանից երեք անգամ երկ—երկու դոյլ ջուր վերցրին: Ի՞նչքան ջուր մնաց այնտեղ:

204. Ապակի ձգողը երեք լուսամտի մէջ ապակիներ ձգեց. առաջին երկուսին երկ-երկու հատ գնաց, իսկ երրորդին—չորս: Նա ընդամենը քանի՞ ապակի ձգեց:

205. Մի հովուի պատուիրեցին՝ հինգ շոյգ տրեխ անել. նա միայն եօթը հատ տրեխ արեց: Գարձեալ քանի՞ տրեխ մնաց անելու:

206. Մի երեսայ եօթը թերթ թուղթ ունէր. նա ստացաւ դարձեալ երկու թերթ, և այդ բոլոր թղթից երեք թերթանոց տետրակներ կարեց: Նա քանի՞ տետրակ կարեց:

207. Տահառագործը տասն օղ ունէր. չորս օղը նա կիսատակառներին հապցրեց, իսկ մնացածները՝ երկու տակառին—հաւասար: Իւրաքանչիւր պակասին քանի՞ օղ գնաց:

208. Հայրը խնձորի ծառից առաջ հինգ խնձոր պոկեց, իսկ յետոյ՝ չորսը. այդ խնձորները նա իւր բոլոր աղջըկերանց բաժանեց, իւրաքանչիւրին երեք հատ սալով: Նա քանի՞ աղջիկ ունէր:

209. Գիւղացին երկու ճոպան ունի— մէկի երկարութիւնը տասն արշին է, իսկ միւսինը երկու արշին առաջինից կարճ. կարճ ճոպանը նա կէս արեց, Իւրաքանչիւր կէսը ի՞նչ երկարութիւն ունեցաւ:

210. Երեք նստարանի վերայ տասն աշակերտ են նստած՝ առաջին նստարանի վերայ չորս, իսկ մնացածներից իւրաքանչիւրի վերայ հաւասար: Քանի՞ աշակերտ է նստած երրորդ նստարանի վերայ:

211. Գիւղացին ինն գերան ունէր: Նոցա երրորդ մասը նա գոմի նորոգութեան համար գործածեց: Նորա մօտ դարձեալ քանի՞ գերան մնաց:

212. Հայրը իւր երկու որդւոց ինը կողէկ տուեց՝ մեծ որդուն հինգ կողէկ, իսկ փոքրին հաւասար գնանոց երկու դրամ: Փոքր որդին ի՞նչպիսի դրամներ ստացաւ:

213. Փոքրիկ շոգենաւը առաջին երկու ժամուս ժամը չորս վերատ էր անցնում, իսկ երրորդ ժամուս՝ առաջին երկու ժամուսանից երեք վերատ պակաս: Շոգենաւը երրորդ ժամուս քանի՞ վերատ անցկացաւ:

214. Տանտիկինը հինգ կողէկ ունէր, չորս փայտեայ

գրալ գնելու համար նորան երեք կողէկ էր պակասում: Իւրաքանչիւր գրալը ի՞նչքան արժէք:

215. Շրջալսածաւոր մորու գրուանքան գնում է՝ եօթը կողէկով, իսկ ծախում—տասնով: Նա ի՞նչքան մորի պէտք է ծախէ, որ ինն կողէկ աշխատանք ստանայ:

216. Երկու լուսամտի վերայ հաւասար կերպով տասն ծաղկաման է դրած. առաջին լուսամտից մի ծաղկաման վերցրին և դրին երկրորդի վերայ: Իւրաքանչիւր լուսամտի վերայ քանի՞ ծաղկաման կայ:

217. Մի փոստային կայարանում տասը ձի կայ, ճանապարհորդները երկու եռաձի կառք վարձեցին: Վայարանումը քանի՞ ձի մնաց:

218. Մի երեխայ գնեց մի հատ՝ երկու կողէկանոց մատիտ և երկու էլ միանման տետրակ: այդ ծախքի համար նա երկուշահանոց տուեց: Երեխան իւրաքանչիւր տետրակի համար ի՞նչքան վճարեց:

219. Պղնձգործը երկու թերթ պղինձ ունէր. մէկ թերթը վեց գրուանքայ էր քաշում, միւսը—չորս: Բոլոր պղնձից կաթսաներ շինեց և իւրաքանչիւրի համար երկ—երկու գրուանքայ պղինձ գործածեց: Նա քանի՞ կաթսայ շինեց:

220 Մի սենեակում պատկերներ են քաշ արած. երկու պատի վերայ կայ երկ-երկու հատ, իսկ մնացած երկուսի վերայ՝ երեք-երեք: Սենեակի մէջ ընդամենը քանի՞ պատկեր է քաշ արած:

221. Երեք արհեստաւոր ութ հատ ական շրջանակ շինեցին. առաջինը շինեց՝ բոլոր շրջանակների չորրորդ մասը, երկրորդը—երեք հատ, իսկ երրորդը—մնացածը: Երրորդ արհեստաւորը քանի՞ շրջանակ շինեց:

222. Մի տանտիկին երեք օրում երկու գրուանքայ չորսնոց մօմ գործածեց. առաջին օրը գնաց երկու մօմ, իսկ մնացած օրերում—հաւասար: Տանտիկինը երկրորդ օրը քանի մօմ գործածեց:

223. Հայրը իւր երեք որդւոց վեց խնձոր բաժանեց. մեծին տուեց բոլոր խնձորների կէսը, միջնակին՝ մի երրորդ մասը, իսկ փոքրին մնացածը: Փոքր որդուն ինչքան հասաւ:

224. Ուսուցիչը աշակերտներին տասը թերթ թուղթ բաժանեց. երկու աշակերտի տուեց՝ երկ-երկու թերթ, իսկ մնացածներին՝ երեք-երեք: Նա թուղթը քանի՞ աշակերտի մէջ բաժանեց:

225. Ուսումնարանի բարձր բաժանման համար հարկաւոր է՝ երկու քարետախտակ, իսկ փոքրի համար՝ երեք անգամ աւելի: Երկու բաժանման համար քանի՞ քարետախտակ պէտք է գնել:

226. Սենեակի մէկ պատի տակ ութ աթոռ են շարած, իսկ միւսի տակ՝ չորս անգամ պակաս: Երկու պատի տակ քանի՞ աթոռ կայ:

227. Երեք եղբայր սունկ հաւաքելու համար անտառ գնացին. մեծ եղբայրը ինը սունկ գտաւ, իսկ միջնակը մեծից և փոքրն էլ միջնակից՝ երեք-երեք անգամ պակաս գտան: Փոքր եղբայրը քանի՞ սունկ գտաւ:

228. Ուսուցիչը աշակերտին առաջին անգամ երկու գրիչ տուեց, երկրորդ անգամ առաջինից երկու անգամ աւելի, իսկ երրորդ անգամ՝ երկրորդից՝ նոյնպէս երկու անգամ աւելի: Նա աշակերտին երրորդ անգամ քանի՞ գրիչ տուեց:

229. Պարտիզպանը առաջին ածուից ինը գլուխ կաղամբ հանեց, երկրորդից երեք անգամ պակաս, քան թէ առաջինից, իսկ երրորդից՝ երկու անգամ աւելի, քան թէ երկրորդից: Նա երրորդ ածուից ինչքան կաղամբ վերցրեց:

230. Վերելի թարեքի վերայ վեց գիրք կայ, միջինի վերայ—չորս, իսկ ներքեկինի վերայ՝ վերելի երկու թարեքներից երկու անգամ պակաս: Ներքեկի թարեքի վերայ քանի՞ գիրք կայ:

231. Մէկ մարգագետնից երկու զէզ խոտ վէրտուին, միւսից—երեք, իսկ երրորդից երկու անգամ աւելի, քան թէ առաջին երկուսից: Երրորդ մարգագետնից ի՞նչքան խոտ ստացան:

232. Հեշտանուր ութ գրուանքայ է քաշում, աշտանակը—երկու, իսկ մատուցարանն էլ աշտանակից երկու անգամ ծանր է: Մատուցարանը հեշտանուրից քանի՞ անգամ է թեթեւ:

233. Մի գիւղացի կին մէկ վերնաշորի համար ինն արշին չիթ գործածեց, երկրորդի համար—չորս արշին առաջինից պակաս, իսկ երրորդի համար—երկրորդից երկու անգամ շատ: Երրորդի համար ինչքան չիթ գնաց:

234. Խնամութպանը երեք գնողի վերայ տասը գրուանքայ նաւթ ծախեց. առաջինին տուեց երկու գրուանքայ, իսկ երկրորդին՝ երեք անգամ աւելի: Երրորդ գնողը ինչքան նաւթ գնեց:

235. Երեք գրուանքայ խոշոր աղը վեց կոպէկ արժէ, իսկ երկու գրուանքայ մանր աղը—ութ: Խոշոր աղը մանրից քանի՞ անգամ է արժան:

236. Մայրը մեծ աղջկանը երկու ասեղ տուեց, միջնակին երկու անգամ աւելի, իսկ փոքրին մեծից երկու անգամ քիչ: Մայրը իւր աղջկերանց քանի՞ ասեղ տուեց:

237. Մեկուարոյժը առաջին փեթակից երեք գրուանքայ մեղր հանեց, երկրորդից՝ երեք անգամ քիչ, քան թէ առաջինից, երրորդից՝ հինգ անգամ աւելի, քան թէ երկրորդից: Նա ընդամենը ճրքան մեղր հանեց:

238. Մի երեխայ ընկոյզները երեք կիտուկ արեց. առաջին կիտուկում երկու ընկոյզ կար, երկրորդում—երկու անգամ առաջինից աւելի, իսկ երրորդում—մի ընկոյզով առաջինից աւելի: Երեխան ընդամենը քանի՞ ընկոյզ դարսեց:

239. Ճոպանը հինգ կտոր արին՝ առաջին կտորի երկաթութիւնը եօթն արշին էր, երկրորդինը—երեք արշինով առաջինից աւելի, երրորդինը—չորս արշինով երկրորդից կարճ, չորրորդինը—երկու անգամ երրորդից կարճ, իսկ հինգերորդին էլ—երեք անգամ չորրորդից երկար: Ճոպանի հինգերորդ կտորը ինչ երկարութիւն ունէր:

II. ԽՆԳԻՐՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻՒՐՆԻ ՏԱՄԵՆԱԿՆԵՐՈՎ:

Գ Ո Ի Մ Ա Ր Ո Ի Մ Ն:

240. Մի հովիւ երեքշարթի 30 ոչխար խուզեց, իսկ չորեքշարթի—10: Նա երկու օրում քանի՞ ոչխար խուզեց:

241. Հայրը որդուն տուեց 20 թերթ սպիտակ և 50 թերթ մոխրագոյն թուղթ: Որդին ընդամենը ինչքան թուղթ ստացաւ:

242. Մի գիւղացի կին մանեց՝ 10 կարժ բարակ և 80 կարժ էլ հաստ թել: Նա ընդամենը քանի՞ կարժ թել մանեց:

243. Փողոցի աջ կողմում 20 տուն կայ, իսկ ձախ կողմում՝ նոյնպէս 20: Բոլոր տները քանի՞ մն են:

244. Չիթագործը առաջին շաբաթ 50 դոյլ ձէթ հանեց, իսկ երկրորդ շաբաթ՝ 40 դոյլ: Երկու շաբաթուայ մէջ նա ինչքան ձէթ հանեց:

245. Մի հիւան շինեց՝ 30 հատ լորենու, իսկ 50 հատ էլ աւելի՝ կեչի քանոններ: Կեչի ծաղից շինած քանոնները քանի՞ մն են:

246. Կալուածատէրը մէկ մարգագետնից 60 սայլ խոտ ստացաւ, իսկ միւսից՝ 30 սայլ: Երկու մարգագետնից նա քանի՞ սայլ խոտ ունեցաւ:

247. Պարտիզպանը մի ամուկից առաջին անգամ 60 վարունգ քաղեց. իսկ երկրորդ անգամ՝ 40 հատ աւելի: Վերջին անգամ նա քանի՞ վարունգ քաղեց:

248. Շտեմարանումը 20 չեափերիկ դարի կար. նորա մէջ ամեցին դարձեալ 80 չեափերիկ: Ընդամենը ինչքան դարի եղաւ:

249. Գիւղացին թաթմաններ գնեց և 70 կոպէկ վճարեց. նորա ձօտ դարձեալ 30 կոպէկ մնաց: Նա ընդամենը ճրքան փող ունէր:

Հ Ա Ն Ո Ի Մ Ն:

250. Կաթսան 30 գրուանքայ է քաշում, իսկ կոնքը նորանից 10 գրուանքայով թեթեւ է: Ինչքան է քաշում կոնքը:

251. Ջրամանուսն 80 դոյլ ջուր՝ կար. նորանից 30 դոյլ վերցրին: Ինչքան ջուր մնաց:

252. Դերձակը գնեց՝ 50 արշին սև և 20 արշին պակաս՝ կապոյտ մահուգ: Նա ինչքան կապոյտ մահուգ գնեց:

253. Պարտիզուսը բուսած էր՝ 90 թուփ կարմիր և 50 թուփ էլ սպիտակ հաղարջի: Ո՞ր հաղարջից քիչ կար և այլն էլ ձրքանով քիչ:

254. Մի երեխայ 40 ընկոյզը երկու կիտուկ արեց. նույնից մէկուս 20 ընկոյզ կար: Քանի՞ ընկոյզ կար միւս կիտուկի մէջ:

255. Մի կով տարէնը 90 դոյլ կաթն էր տալիս, իսկ միւսը՝ 70: Առաջին կովը երկրորդից քանի՞ դոյլ աւելի կաթն էր տալիս:

256. Պարտիզպանը 100 հատ լորու սերմ անկեց. դուրսնից 20 դուրս չեկաւ: Քանի՞ հատիկ դուրս եկաւ:

257. Ուսուցիչը մի գիրք գնեց 50 կոպէկով և տուեց ծախողին մէկ մանէթանոց: Նա ի՞նչքան փող պէտք է յետ ստանայ:

258. Մի տանտիկին 100 ձու ներկեց՝ 50-ը կարմիր ներկով, իսկ մնացածները — դեղին: Նա դեղին գոյնով քանի՞ ձու ներկեց:

259. Զրաղացպանը մի գիւղացու համար 70 չետվերիկ ցորեն աղաց, իսկ միւսի համար՝ 20 չետվերիկ պակաս: Նա երկրորդ գիւղացու համար ի՞նչքան ցորեն աղաց:

Բ Ա Ձ Մ Ա Պ Ա Տ Կ Ո Ի Մ Ն:

260. Շաքարի գրուանքան 20 կոպէկ արժէ, իսկ սուրճի գրուանքան երկու անգամ թանգ է: Ի՞նչքան արժէ սուրճի գրուանքան:

261. Գիւղից մինչև գիւղաքաղաք 10 վերստ է, իսկ մինչև քաղաք՝ ինն անգամ հեռու: Գիւղից մինչև քաղաք քանի՞ վերստ է:

262. Մի տուն երեք յարկանի է և իւրաքանչիւր յարկում էլ 20 լուսամուտ կայ: Տունը քանի՞ լուսամուտ ունի:

263. Մի գիւղացի առաջին արտում 20 ախօս քաշեց, իսկ երկրորդում՝ չորս անգամ աւելի: Երկրորդ արտում քաշած ախօսները քանի՞սն են:

264. Երկաթուղու գնացքը մի ժամում 30 վերստ է կտրում: Նա քանի՞ վերստ կըկտրէ երկու ժամում:

265. Ճեմելիքի երկու կողմում լորի ծառեր կան, իւրաքանչիւրում 40 հատ: Ընդամենը քանի՞ լորի ծառ կայ ճեմելիքում:

266. Մի չետվերիկ գարին 30 գրուանքայ է քաշում: Ի՞նչքան կ'քաշէ երեք չետվերիկ գարին:

267. Մեքենայի անիւը մի ժամում 50 պտոյտ է անում: Նա ձրքան պտոյտ կանէ երկու ժամում:

268. Մի կարանող կին հինգ կապոց ասեղ գնեց. իւրաքանչիւր կապոցի մէջ 20 ասեղ կար: Նա ընդամենը քանի՞ ասեղ գնեց:

269. Երկու գիւղացի կալաւել քաղեցին, իւրաքանչիւրը 40 հատ: Երկուսը միասին քանի՞ կալաւել քաղեցին:

270. Մի սպայ զինուորներին երեք կարգ կանգնեցրեց, իւրաքանչիւր կարգում 20 մարդ կար: Նա ընդամենը քանի՞ զինուոր կանգնեցրեց:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն:

271. Մի մարդ 40 մանէթով կիսամուշտակներ գնեց. իւրաքանչիւրին 20 մանէթ տուեց: Նա քանի՞ կիսամուշտակ գնեց:

272. Հիւաները փայտեայ ամբարի պատերը նորոգելու համար 60 տախտակ գործածեցին, իւրաքանչիւր պատի համար 30 տախտակ գնաց: Նոքա քանի՞ պատ նորոգեցին:

273. Գիւղացին 80 չետվերիկ ցորեն ցանեց. իւրաքանչիւր արտի համար գնաց 20 չետվերիկ: Նա քանի՞ արտ ցանեց:

274. 60 գրուանքայ ճարպը քանի՞ ոչխարը կըտայ, եթէ որ իւրաքաքչիւրը 20 գրուանքայ է տալիս:

275. Ցանկապատերի նորոգութեան համար գիւղացին 90 ցից գործածեց, իւրաքանչիւրի համար 30 հատ: Նա քանի՞ ցակապատ նորոգեց:

276. Զկնորսը ուռկանների նորոգութեան համար 40

գրուանքայ արճիճ գործածեց. իւրաքանչիւր ուսուցանի հա-
մար 20 գրուանքայ գնաց: Նա քանի՞ ուսուցան նորոգեց:
277. Շրջավաճաւը 100 խնձորը կողովների մէջ դարսեց,
իւրաքանչիւրում 50 հատ: Նա բոլոր խնձորը քանի՞ կողովի
մէջ դարսեց:

278. Մի գիւղացի 100 մանէթ պարտք վերցրեց. այդ
պարտքը վճարում էր՝ ամսական 20 մանէթ տալով: Նա իւր
բոլոր պարտքը քանի՞ ամսում կարող էր վճարել:

279. Տանտէրը իւր ծառային հինգ ամսուայ համար
վճարեց 50 մանէթ վարձ: Ծառան ամսական ի՞նչքան վարձ
էր ստանում:

280. Կաթսան 70 գրուանքայ է քաշում, իսկ թաւան
նորանից եօթն անգամ թեթեւ է: Թաւան ի՞նչքան է քաշում:

281. Մանրավաճառը առաջին անգամ 80 գրուանքայ
աղուամազ գնեց, իսկ երկրորդ անգամ՝ առաջինից երկու
անգամ քիչ: Նա երկրորդ անգամ ինչքան աղուամազ գնեց:

282. Մի կալուածատէր 60 գերան ունէր. նա դոցա
կիսից տախտակներ պատրաստել տուց: Տախտակների հա-
մար սզոցած գերանները քանի՞սն են:

283. Մեղուարոյձը երեք փեթակից՝ հաւասար կերպով՝
90 գրուանքայ մեղր կտրեց: Նա իւրաքանչիւր փեթակից
ի՞նչքան մեղր հանեց:

284. Շոգենաւով 80 ճանապարհորդներ եկան. բոլոր
ճանապարհորդների չորրորդ մասը զինուորներ էին: Շոգե-
նաւով քանի՞ զինուոր եկաւ:

285. Մի գիւղացի երկու արտից հաւասար կերպով
100 խուրճ վուշ քապեց: Նա իւրաքանչիւր արտից քանի՞
խուրճ ստացաւ:

186. Արտատէրը իւր արտից 100 չեովերիկ գարի
ստացաւ, մէկին հինգ օգուտով: Արտումը քանի՞ չեովերիկ
գարի էր ցանած:

ԽՆԴԻՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

287. Պահարանի վերին թարէքում 50 գիրք կայ, միջի-

նում—30, իսկ ներքեկնում—20: Պահարանի մէջ ընդամենը
քանի՞ գիրք կայ:

288. Փողոցի աջ կողմում 30 տուն կայ, իսկ ձախ կող-
մում՝ 20-ով աւելի: Ընդամենը քանի՞ տուն կայ:

289. Մի ձիթագործ առաջին շաբաթ 50 դոյլ ձէթ քա-
շեց, երկրորդ շաբաթ՝ առաջինից 20 դոյլ պակաս, իսկ եր-
րորդ շաբաթ՝ երկրորդից 10 դոյլ նոյնպէս պակաս: Երրորդ
շաբաթ նա ինչքան ձէթ քաշեց:

290. Պարտիզպանը առաջին ամուսին 100 գլուխ կա-
ղամբ հանեց, երկրորդից—20 գլուխ առաջինից պակաս, իսկ
երրորդից՝ 30 գլուխ երկրորդից նոյնպէս պակաս: Նա եր-
րորդ ամուսին կաղամբ հանեց:

291. Զինորսը առաջին անգամ 50 ձուկը բռնեց, եր-
կրորդ անգամ 40, իսկ երրորդ անգամ՝ առաջին երկու ան-
գամուանից 30 ձուկը պակաս: Նա երրորդ անգամ քանի՞
ձուկը բռնեց:

292. Սանսթպանը երեք արկղ մոմ ունի՝ առաջինում
կայ 20 գրուանքայ, երկրորդում՝ 40, իսկ երրորդում՝ 30
գրուանքայ առաջին երկուսից պակաս: Երրորդ արկղում քա-
նի՞ գրուանքայ մոմ կայ:

293. Մի ուսումնարանում սովորում են՝ 20 աղջիկ—և
երկու անգամ էլ աւելի տղայ: Ընդամենը քանի՞ երեխայ է
սովորում:

294. Երկրագործը մի արտում 10 չեովերիկ ցորեն ցա-
նեց, իսկ միւսում—երեք անգամ աւելի: Նա երկու արտում
ի՞նչքան ցորեն ցանեց:

295. Տանտիկինը տաւարի մի համար երեք հատ արա-
սանոց մսխեց. գնելուց յետոյ նորա մօտ մի հատ տասը կօ-
պէկանոց մնաց: Նա սրքան փող ունէր:

296. Վաճառականը եօթը գրուանքայ շաքարահաց գնեց,
գրուանքան 10 կոպէկով. նա ծախեց և աշխատեց 20 կոպէկ:
Բոլոր շաքարահացը որքանով ծախեց:

297. Ապակի ձգողը մէկ տան համար 60 ապակի ձգեց,
միւսի համար՝ 40, իսկ երրորդի համար՝ առաջին երկուսից
հինգ անգամ պակաս: Երրորդ տանը նա քանի՞ ապակի ձգեց:

298. Մշակ—կանայք առաջին օրը 90 ածու քաղհանեցին, երկրորդ օրը՝ առաջինից երեք անգամ պակաս, երրորդ օրը՝ երկրորդ օրուանից 50 ածու աւելի: Նոքա երրորդ օրը քանի՞ ածու քաղհանեցին:

299. Դարբինը 70 մանգաղ ունի. նա կրկին 20 հատ ևս պատրաստեց և բոլորը երեք գնողի վերայ հաւասար կերպով վաճառեց: Իւրաքանչիւրին քանի՞ մանգաղ տուեց:

300. Ուսուցիչը գնեց՝ հինգ հատ այրբենարան և մի հատ թուաբանական խնդիրների ժողովածու. այրբենարանների համար մի մանէթ վճարեց, իսկ խնդիրների ժողովածուի համար մի այրբենարանի արժէքից 20 կոպէկ աւելի տուեց: Թուաբանական խնդիրների ժողովածուի համար ուսուցիչը ինչքան վճարեց:

301. Մի վարպետ երեք կապոց երկաթէ լար ունէր. առաջին երկուսը 60 արշին էր, իւրաքանչիւր կտորը հաւասար երկարութեամբ, իսկ երրորդը՝ 40 արշին երկրորդից աւելի էր: Երրորդ կապոց լարի երկարութիւնը ինչքան էր:

302. Մի աստիճանաւոր ամսական 90 մանէթ էր ստանում և գորանից 70-ը մսխում: Նա երկու ամսում ինչքան փող կը հաւաքէ:

303. Մշակութիւն անելու համար առաջին գիւղից քաղաք գնացին՝ 60 գիւղացի, երկրորդից—40 մարդ առաջինից պակաս, իսկ երրորդ գիւղից՝ չորս անգամ երկրորդից աւելի: Երրորդ գիւղից աշխատանքի համար քանի՞ գիւղացի գնաց:

304. Մի գիւղացի կին ունէր՝ 10 կարժ բարակ և եօթն անգամ աւելի հաստ՝ թել. նա հաստ թելից 40 կարժ ծախեց: Նորա մօտ վարձեալ քանի՞ կարժ հաստ թել մնաց:

305. Տանտէրը 100 գերան ունէր. նա 40 գերան տան նորոգութեան համար գործածեց, իսկ մնացածները՝ հաւասար կերպով—երկու մարագի շինութեան համար: Իւրաքանչիւր մարագին քանի՞ գերան գնաց:

306. Տակառագործը 70 երկաթի օղ ունէր. 40-ը նա կիսատակառներին ամրացրեց, իսկ մնացածները՝ դոյլերին,

իւրաքանչիւրին երեք հատ: Տակառագործը քանի՞ դոյլի օղակ ամրացրեց:

307. Երկաթուղու մարդատար գնացքը երեք ժամում 90 վերստ է կտրում, իսկ ապրանքակիրն՝ իւրաքանչիւր ժամում մարդատար գնացքից 20 վերստ պակաս է անցնում: Ապրանքակիր գնացքը մի ժամում քանի՞ վերստ է գնում:

308. Վաճառականը 60 արշին մահուղ ծախեց. իւրաքանչիւր 20 արշինի համար նա 30 մանէթ ստացաւ: Բոլոր մահուղը որքանով ծախեց:

309. Մի հիւսն 100 աթոռ շինեց և 50 աթոռի համար 40 մանէթ աշխատանքի վարձ ստացաւ: Նա բոլոր աշխատանքի համար ինչքան փող վերցրեց:

310. Ծառան իւր տիրոջից 6 հատ տասը մանէթանոց թղթադրամ ստացաւ. այդ փողի երրորդ մասը նա գիւղ ուղարկեց: Ծառայի ուղարկած փողը ինչքան է,

311. Մի դերձակ կին ութ տասնեակ ասեղ գնեց. նոցա չորրորդ մասը նա բանուորկնոջը տուեց: Բանուոր կինը քանի՞ ասեղ ստացաւ:

312. Թռչնորսը իւր բոլոր կաքաւներին վանդակների մէջ դրեց՝ երեքում—տասնական, իսկ երկուսում՝ քսանական կաքաւ: Նա քանի՞ կաքաւ ունէր:

313. Լուսանկար պատկերները պատի վերայ այսպէս էին քաշ արած՝ երկու կարգ—իւրաքանչիւրում—10 պատկեր և երեք կարգ՝ ամեն մէկում 20: Պատի վերայ քանի՞ պատկեր կար քաշ արած:

314. Մի կալուծատէր ունէր՝ 100 կաղնի և 60 եղևնի գերան. գոմ շինելիս նա գործածեց կաղնի գերանների կէսը, իսկ եղևնիները՝ երրորդ մասը: Գոմի շինութեան վերայ ընդամենը քանի՞ գերան գնաց:

315. Առաջին շտեմարանում 90 չետվերիկ սիսեռ կար, իսկ երկրորդում—80. առաջինից ծախեցին երրորդ մասը, իսկ երկրորդից—չորրորդը: Ընդամենը որքան սիսեռ ծախեցին:

316. Մի պաստառագործ 90 արշին պաստառ ունէր. նա 30 արշինը գործածեց աթոռների, 40-ը բազկաթոռների,

իսկ բոլոր մնացածն էլ գահաւորակների համար: Պատանապործը քանի՞ գահաւորակ պատանուց:

317. Մանբավաճառը 70 գրուանքայ նաւթ ունէր. մի յաճախորդին նա 20 գրուանքայ տուեց, միւսին՝ 10, իսկ բոլոր մնացածն էլ շէնքի մէջ ամեց, իւրաքանչիւրում 20 գրուանքայ: Նա նաւթով քանի՞ շէնք ցրեց:

318. Զրադացպանը մի գիւղացու համար 10 հակ ցորեն աղաց, միւսի համար՝ 30, երրորդի համար՝ առաջին երկուսից երկու անգամ աւելի, իսկ չորրորդի համար՝ չորս անգամ երրորդից պակաս: Չորրորդ գիւղացու համար նա ի՞նչ քան ցորեն աղաց:

319. Մի այգում կայ՝ 20 հատ խնձորենի, զորանից տասնով աւելի տանձենի, իսկ տանձենուց երեք անգամ էլ աւելի կեռասենի. բոլոր կեռասի ծառերը հաւասար կերպով ինն շարքում են անկած: Իւրաքանչիւր շարքում քանի՞ կեռասենի կայ:

320. Վարպետը շինեց՝ երկու պղնձեայ կաթսայ և մի քանի էլ կոնք. իւրաքանչիւր կաթսայի համար գնաց 50 գրուանքայ. իսկ իւրաքանչիւր կոնքի համար—10 գրուանքայ պղինձ: Վարպետը քանի՞ կոնք շինեց, եթէ որ բոլոր կոնքերի համար կաթսաներից 20 գրուանքայ պակաս պղինձ գործածեց:

321. Տանտիկինը գնեց՝ հինգ գրուանքայ շաքար, գրուանքան 20 կոպէկով և մի քանի գրուանքայ էլ սուրճ, գրուանքան 30 կոպէկով: Նա սրքան սուրճ գնեց, եթէ որ բոլոր սուրճի համար շաքարի գնից 40 կոպէկ պակաս վճարեց:

ԽՆԳԻՐՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻՒՐԵՆԻ ԹՈՒԵՐՈՎ:

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ:

322. Մի ցանկապատի համար գիւղացին 57 ձող գործածեց, իսկ միւսի համար՝ 40: Երկու ցանկապատի համար սրքան ձող գնաց:

323. Տանտիկինը գնեց՝ 50 կոպէկի շաքար և 25 կոպէկի էլ թէյ: Նա ընդամենը սրքան փող մսխեց:

324. Մի ձկնարանում 43 ձուկը կայ, իսկ միւսում՝ 55: Երկու ձկնարանի մէջ քանի՞ ձուկը կայ:

325. Կտրի աջակողմեան թեքուածքի համար 37 թերթ երկաթ գնաց, իսկ ձախ կողմի համար՝ 3 թերթ աւելի: Ի՞նչ քան երկաթ գնաց ձախ թեքուածքի համար:

326. Երկու եղբայր փող վեր եկան և մէկ կարթ գնեցին. մի եղբայրը տուեց 25 կոպէկ, միւսը՝ 5 հատ երեք կոպէկանոց: Կարթը ինչքան արժէր:

327. Անուագործը շինեց՝ 67 երկար, իսկ 23 հատ էլ աւելի կարճ ճաղ: Նա քանի՞ կարճ ճաղ շինեց:

328. Փողոցը սալաշատակելու համար բերին՝ առաջ 41, իսկ յետոյ՝ 59 սալ քար: Ընդամենը քանի՞ սալ քար լերին:

329. Ուսուցմարանի հոգաբարձուն նուիրեց 24 աղօթագիրք և 76 այրբնարան: Նա ընդամենը քանի՞ գիրք ընծայեց:

330. Մի ուխտաւոր 9 օր մնաց Հաղբատայ վանքում և 7 օր էլ՝ Սանահունքում: Նա երկու վանքերում քանի՞ օր մնաց:

331. Մի գիւղում երկու անգամ հրդեհ պատահեց, առաջին անգամ այրուեց չորս տուն, իսկ երկրորդ անգամ— 8: Երկու անգամ այրուած տները քանի՞սն են:

332. Մի կաշեգործ ծախեց՝ 9 հատ կաշուէ մանր և 8 հատ մեծ սանձեր: Նա ընդամենը քանի՞ սանձ ծախեց:

333. Մի աղջիկ առաջ 36 վարդ պոկեց, իսկ յետոյ էլ՝ 7-ը: Քաղած ծաղիկներից նա մի պսակ հիւսեց: Հիւսած պսակը քանի՞ վարդից է:

334. Մի նաւահանգստի մէջ 7 նաւ էր կանգնած. նորա մէջ դարձեալ 77 նաւ մտաւ: Բոլորը քանի՞ նաւ եկաւ:

335. Մի արտից 44 խուրճ գարի բերին, իսկ միւսից՝ 8 խուրճ աւելի: Երկրորդ արտից բերածը քանի՞ խուրճն է:

336. Առաջին գիւղից մինչև երկրորդը 89 վերստ է, իսկ առաջինից մինչև երրորդը՝ 9 վերստ աւելի: Առաջին գիւղից մինչև երրորդը քանի՞ վերստ է:

337. Մի հացթուխ ծախեց՝ 8 հաճարի և 57 էլ ցորենի հաց: Նա քանի՞ հաց ծախեց:

338. Փականագործը շինեց՝ 9 ներքին և 76 էլ արտաքին կողպէքներ: Նա քանի՞ կողպէք շինեց:

339. Մի դերձակ կին մի կտոր չիթից երկու ձեռք շոր կարեց. մի ձեռք շորի համար նա 16 արշին չիթ գործածեց, իսկ միւսի համար՝ 15 արշին: Չիթի կտորը քանի՞ արշին էր:

340. Կապալառուն տան շինութեան համար երկու խումբ ժշակներ վարձեց. մէկ խումբը բաղկացած էր 28 հոգուց, իսկ միւսը՝ 17: Նա ընդամենը քանի՞ մշակ վարձեց:

341. Ուսումնարանը երկու բաժանմունք ունի. մէկում 36 աշակերտ կայ, իսկ միւսում—26: Ուսումնարանումը քանի՞ աշակերտ կայ:

342. Փողոցի աջ կողմը 48 տուն կայ, իսկ ձախ կողմը—43: Ընդամենը քանի՞ տուն կայ:

343. Գիւղացին երկու տեսակ կարտոֆիլ ցանեց՝ առաջին տեսակից 18 չետովերիկ, իսկ երկրորդից—25: Նա սրբան կարտոֆիլ ցանեց:

344. Որսորդը ծախեց՝ 27 հատ աղուէսի և 45 հատ էլ նապաստակի մորթի: Նա ընդամենը քանի՞ մորթի ծախեց:

345. Ճանապարհորդները փոստային իջևանից 28 ձի վերցրին. այստեղ դարձեալ 36 ձի մնաց: Իջևանումը ընդամենը քանի՞ ձի կար:

346. Մայրը 37 արշին գետնագործ շալ գործեց, իսկ աղջիկը—նորանից 46 արշին աւելի: Աղջիկը քանի՞ արշին շալ գործեց:

347. Մի գինեվաճառ վաճառեց՝ 28 շիշ սպիտակ և 64 շիշ էլ կարմիր գինի: Նա բոլորը քանի՞ շիշ գինի վաճառեց:

348. Մի սպայ գինուորներին հանգստացնելու համար մի դիւղում տեղաւորեց 39 հոգի, իսկ միւսում—56: Նա երկու դիւղում քանի՞ գինուոր տեղաւորեց:

349. Շրջավաճառը 58 կոպէկով շաքարի հացեր գնեց. նա գոցա ծախեց և 18 կոպէկ աշխատեց: Բոլոր շաքարահացերը որքանով ծախեց:

350. Մի գործարանում աշխատում են՝ 15 կինարմատ և 69 տղամարդ: Գործարանի մէջ ընդամենը քանի՞ հոգի են աշխատում:

351. Պայտառը Յունուար ամսում 59 ձի պայտեց, իսկ Փետրուար ամսում 39: Նա երկու ամսում քանի՞ ձի պայտեց:

Հ Ա Ն Ո Ի Մ Ն:

352. Թարէքի վերայ 46 այրբենարան էր դարսած. ուսուցիչը գոցանից 20 հատ վերցրեց: Այստեղ դարձեալ քանի՞ այրբենարան մնաց:

353. Բանուորները երեքշաբթի 92 ածու փորեցին, իսկ չորեքշաբթի—62 ածու պակաս: Զորեքշաբթի քանի՞ ածու փորեցին:

354. Առաջին անգամ ձիթահանք բերին՝ 78 սայլ կտաւահատ, իսկ երկրորդ անգամ՝ 34 սայլ պակաս: Երկրորդ անգամ բերած կտաւահատը քանի՞ սայլ էր:

355. 40 գրուանքանոց երկաթի կտորը ձեծելուց 5 գրուանքայ թեթեացաւ: Ծեծելուց յետոյ երկաթի կտորը սրբան էր բաշտում:

356. Մի փոքրիկ անտառում 80 կաղնի ծառ կար. փոթորիկի ժամանակ 8 հատ կտորուեց: Քանի՞ կաղնի կանգուն մնաց:

357. Մեծ քոյրը 70 արշին ասղնագործ հիւսուածք (հարշեայ) գործեց, իսկ փոքրը նորանից՝ 36 արշին պակաս: Փոքրը քոյր գործած հիւսուածքը քանի՞ արշին է:

358. Սիսեռը 90 օրում հասաւ, իսկ ցորենը՝ 79: Յորենը սիսեռից քանի՞ օրով շուտ հասաւ:

359. Վաճառականը չիթի արշինը 11 կոպէկով ծախեց և իւրաքանչիւր արշինումն էլ 2 կոպէկ աշխատեց: Նա չիթի արշինը որքանով էր գնել:

360. Մի հիւան հարթեց (սանդեց)՝ 13 եղևնի և 4 կաղնի տախտակներ: Նա սր տեսակ տախտակից աւելի հարթեց և այն էլ որքանով աւելի:

361. Ուսուցիչը մի դիւթին մատիտից 7 հատը բաժանեց աշակերտներին: Նորա մօտ դարձեալ քանի՞ մատիտ մնաց:

362. Եղբայրը 15 տարեկան է, քոյրը նորանից 7 տարով փոքր է: Քանի՞ տարեկան է քոյրը:

363. Դարբինը պէտք է 14 գերանդի նորոգէր. նա միայն 6 հատ նորոգեց: Դարբնի մօտ նորոգելու համար դարձեալ քանի՞ գերանդի մնաց:

364. Մի տուն 13 սենեակ ունի. նոցանից 8-ը վարձուած են, իսկ մնացածները՝ դատարի: Տան մէջ քանի՞ դատարի սենեակ կայ:

365. Մի գիւղացի կին երկու ձեռք շորի համար 16 արշին չիթ գործածեց. մէկ շորի համար 9 արշին գնաց: Ի՞նչքան չիթ գնաց երկրորդին:

366. Ծախելու համար տօնավաճառ 31 ձի բերին. տօնավաճառը վերջանալուց յետոյ այնտեղ միայն չծախուած երկու ձի մնաց: Քանի՞ ձի էր ծախուել:

367. Ուսումնարանումը 63 քարետախտակ կար. նոցանից 7 կտորուեց: Քանի՞ քարետախտակ մնաց չկտորուած:

368. Երկու տեղ քառակուսի կերպով աղիւսներ էին դարսած. մի քառակուսում կար 98 հատ, իսկ երկրորդում—9 հատ պակաս: Երկրորդ քառակուսում քանի՞ աղիւս կար:

369. Մի տուն 23 լուսամուտ ունի. 16-ը դէպի փողոցն են նայում, իսկ մնացածները—դէպի բակը: Քանի՞ լուսամուտ է նայում դէպի բակը:

370. Մի դաշտում 32 արտ ցորեն և հաճար էր ցանած. ցորենը 17 արտ էր: Քանի՞ արտ էր հաճարը:

371. Պարտիզպանը առաջին անգամ՝ 64 զրուանքայ կեռաս քաղեց, իսկ երկրորդ անգամ՝ 25 զրուանքայ պակաս: Նա երկրորդ անգամ քանի՞ զրուանքայ կեռաս քաղեց:

372. Քոյրը դաշտում 85 կապուկ մորի քաղեց, իսկ եղբայրը—36: Նոցանից որք աւելի քաղեց և այն էլ որքանով աւելի:

373. Մի խանութպան 23 զրուանքայ խոշոր աղը խառնեց մի քանի զրուանքայ մանր աղի հետ և ստացաւ 71 զրուանքայ խառնուրդ: Նա քանի՞ զրուանքայ մանր աղ խառնեց:

374. Մէկ արտ պարարտացնելու համար 52 սայլ ազր գործածեցին, իսկ երկրորդի համար—14 սայլ պակաս: Երկրորդ արտը պարարտացնելու համար քանի՞ սայլ ազր գնաց:

375. Մէկ գիւղացի մի ձի գնեց 91 մանէթով և մի կով էլ—56 մանէթով: Կովը ձիուց սրբանով արժան նստեց:

376. Ներկարարը Յուլիս ամսում 81 առաստաղ ներկեց, իսկ Օգոստոս ամսում էլ—64 առաստաղ պակաս: Օգոստոսին նա քանի՞ առաստաղ ներկեց:

377. Գործարանը տաքացնելու համար գնեցին՝ 85 սաժէն եղևնի և 38 սաժէն կաղնի փայտ: Ո՞ր տեսակ փայտից շատ գնեցին և այլն էլ սրբանով շատ:

378. Մի գիւղացի գտաւ՝ 98 հատ ոչխարասունկ և 59 հատ ծառասունկ: Նա սր տեսակից բիշ գտաւ և այն էլ սրբանով բիշ:

379. Տանտիկինը մի մանէթ ունէր. երբոր նա մի քանի կոպէկ մսխեց տաւարի միս գնելու համար, այն ժամանակ նորա մօտ դարձեալ 64 կոպէկ մնաց: Նա տաւարի միսը քանի՞ կոպէկով գնեց:

Բ Ա Ձ Մ Ա Պ Ա Տ Կ Ո Ի Մ Ն:

380. Տակառագործը երկու կիսատակառի վերայ օղակներ ամրացրեց, իւրաքանչիւրին վեց հատ: Նորա ամրացրած օղակները քանի՞սն են:

381. Ուսումնարանի բարձր բաժանման աշակերտները 7 նստարանի վերայ էին նստած, իւրաքանչիւրի վերայ չորս հոգի: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ բարձր բաժանմունքում:

382. Սաժեկը երեք արեխն *) է: 4 սաժէնը քանի՞ արշին կ'լինի:

283. Չորս մամր մի գրուանկայ և քառուս: Քանի մոմը ութ զրուանքայ կըքաշէ:

384. Մի կարանող կին մի կտոր բաթանից 7 շապիկ կարեց. իւրաքանչիւր շապիկի համար հինգ արշին գնաց: Քաթանի կտորը քանի՞ արշին էր:

*) Արշինը երեք թիղ է, կամ մօտաւորապէս չորս թիւ (բթի և ցուցամատի միջի ձգուած տարածութիւն): Պաղը— հինգ թիղ է, կամ կէս գրկաչափ (զուլած):

385. Մեղուարոյծը 9 փեթակից մեկը հանեց, իւրաքանչիւրից 6 գրուանքայ: Նա քանի՞ գրուանքայ մեկը հանեց:

386. Սաժէնը 7 ֆուտ (ոտնաչափ) է: Քանի՞ ֆուտ կըլինի 6 սաժէնը:

387. Փոստային կայարանը 9 եռաձի կառք ունի: Կայարանումը քանի՞ ձի կայ:

388. Թաւան 7 գրուանքայ է քաշում, իսկ կաթսան թաւայից 8 անգամ ծանր է: Կաթսան ինչքան է քաշում:

389. Չեսվերսթ *) 8 չեսվերիկ է: Քանի՞ չեսվերիկ կըլինի 7 չեսվերտը:

390. Ներկարարը փայտէ տան մէջ 7 դուռը ներկեց, իսկ քարէ տան մէջ՝ 9 անգամ աւելի: Քարէ տան մէջ ներկարարը քանի՞ դուռը ներկեց:

391. Ատաղճագործները 8 գերանից տախտակներ սղոցեցին. իւրաքանչիւր գերանից 8 տախտակ դուրս եկաւ: Նոքա քանի՞ տախտակ սղոցեցին:

392. Բագի երկարութեան եօթներորդ մասը 6 սաժէն է: Բագը ի՞նչ երկարութիւն ունի:

393. Կալուածատէրը 10 մարգագետնից առուոյտ (եօնջայ) հարեւ տուեց, իւրաքանչիւրից 8 դէզ: Բոլոր հարեւ տուած առուոյտը քանի՞ դէզ է:

394. Մի գիւղացի իւր տուն 8 հատ 5 մանէթանոց թըղթազրամ ուղարկեց: Նա քանի՞ մանէթ ուղարկեց տուն:

395. Դարբինը պայտերի համար 7 կտոր երկաթ գործածեց, իւրաքանչիւր կտորից 9 սլայտ դուրս եկաւ: Նա ընդամենը քանի՞ սլայտ շինեց:

396. Կալուածատիրոջ տանից մինչև շրագաց 8 վերստ է, իսկ մինչև փոստի կայարան՝ 9 անգամ հեռու: Փոստից մինչև կալուածատիրոջ տուն քանի՞ վերստ է:

397. Ամբարումը երկու կարգ ոսպով լցրած ջուալներ

*) Չեսվերտը, մօտաւորապէս՝ ինն փութ է և հաւասար թաղարին: Թաղարը—երեսուն խան է. խանն էլ (չանախը) մօտաւորապէս տասներկու գրուանքայ է:

կան դարսած, իւրաքանչիւրում՝ 14 ջուալ: Դարսած ոսպերը ընդամենը քանի՞ ջուալ են:

398. Պարանը երեք կտոր արին, իւրաքանչիւր կտորը 23 արշին դուրս եկաւ: Պարանը ինչ երկարութիւն ունէր:

399. Գիւղումը երկու ջրհոր կայ. առաջին ջրհորի խորութիւնը 15 արշին է, իսկ երկրորդինը՝ նորանից 2 անգամ աւելի: Ի՞նչ խորութիւն ունի երկրորդ ջրհորը:

400. Մի ներկարար շատ սենեակներ ունեցող երկու տան առաստաղները ներկեց, իւրաքանչիւրի մէջ 25 հատ: Նա ընդամենը քանի՞ առաստաղ ներկեց:

401. Մի գիւղացի կին օրէնը՝ 16 արշին քաթան էր գործում: Նա հինգ օրում քանի՞ արշին քաթան կըգործէր:

402. Նամակարերը բաժանեց 18 օտար—քաղաքեայ, իսկ հինգ անգամ էլ աւելի՝ քաղաքային նամակներ: Նա ինչքան քաղաքային նամակներ ցրեց:

403. Մեքենայի անիւը մի ժամում 36 պտոյտ է անում: Նա երկու ժամում քանի՞ պտոյտ կանէ:

404. Արեխը 16 վերեօկ *) է: Քանի՞ վերջոկ կ'լինի 3 արշինը:

405. Գրքերի պահարանը 4 թարէք ունի. իւրաքանչիւր թարէքի վերայ 19 գիրք է դարսած: Պահարանումը քանի՞ գիրք կայ:

406. Մի գիւղացի առաջին արտում 28 ակոս քաշեց, իսկ երկրորդում—դրանից երեք անգամ աւելի: Նա երկրորդ արտի մէջ քանի՞ ակոս քաշեց:

407. Մի բանուոր իւր շապկացուի համար 5 արշին չիթ գնեց, արշինը 15 կոպէկով: Նա բոլոր չիթի համար ինչքան վճարեց:

408. Մի ջրաղաց երկու աչք ունի. իւրաքանչիւրը օրական 49 չեսվերիկ ցորեն է աղում: Մի օրում երկու աչքը ինչքան ցորեն կ'աղայ:

409. Ուսումնարանի մէջ սովորում են՝ 25 աղջիկ, իսկ երեք անգամ էլ աւելի տղայ: Ուսումնարանումը քանի՞ տղայ կայ:

*) վերջոկը տեղական բարբառով կոչւում է նշան:

410. Չկնորոք չորս ձկնաբան ունի. իւրաքանչիւրի մէջ 24 լոբոյ կայ: Նա բոլոր ձկնաբաններում քանի՞ լոբոյ ունի:

411. Երկաթուղու գանձապահը ծախեց՝ 19 հատ երկրորդ, իսկ 5 անգամ էլ աւելի՝ երրորդ կարգի տոմսակ: Նա քանի՞ հատ երրորդ կարգի տոմսակ ծախեց:

412. Պարտիզպանը տասը շարք կեռասի ծառեր տնկեց, իւրաքանչիւր շարքում 7 հատ: Ընդամենը քանի՞ կեռասի ծառ տնկեց:

413. Վարպետը 20 հատ ասղնագործութեան ասեղ շինեց. նա իւրաքանչիւրի համար 5 վերջուկ երկաթի թել գործածեց: Բոլոր ասեղներին քանի՞ վերջուկ երկաթի թել դնաց:

414. Մի սպայ զօրագնդի զինուորներին հանգստացնելու համար նոցա 50 խրճիթի մէջ տեղաւորեց, իւրաքանչիւրում երկու հոգի: Զօրագունդը քանի՞ զինուորից էր բազկացած:

415. Կալուածատէրը 24 կով ունի. իւրաքանչիւր կով շաբթէնը 2 գոյլ կաթն է տալիս: Մի շաբթում բոլոր կովերը ինչքան կաթը կրտան:

416. Մի ապակի ձգող 15 շրջանակին ապակի ձգեց, իւրաքանչիւրին՝ 4 հատ: Նա ընդամենը քանի՞ ապակի ձգեց:

417. Մի տաւարած 16 կով է արածացնում. իւրաքանչիւր կովի համար նորան 5 մանէթ վարձ են վճարում: Նա բոլոր կովերի համար ռքքան փող է ստանում:

418. Հնձողները արտի մէջ խրճները 15 կիտուկ արին. իւրաքանչիւր կիտուկում 6 խուրճը կար: Նոքա ընդամենը քանի՞ խուրճ կիտուկ արին:

419. Վաճառականը 25 աղքատի փող տուեց, իւրաքանչիւրին՝ 4 կոպէկ: Նա աղքատներին քանի՞ կոպէկ բաժանեց:

420. Մի շահեմարան 13 սայլ ալիւր բերին. իւրաքանչիւր սայլի վերայ 5 ջուալ կար: Բերած ջուալները ընդամենը քանի՞սն էին:

421. Գուլպայ գործող կինը ժի գրուանքայ թելից 4

գուլպայ գործեց: Նա 17 գրուանքայ թելից քանի՞ գուլպայ կը գործէր:

422. Փականագործը 47 կոպէք շինեց. իւրաքանչիւր կոպէքին 2 գրուանքայ երկաթ գնաց: Բոլոր կոպէքների համար քանի՞ գրուանքայ երկաթ գնաց:

423. Չեկերիկը 8 գաւնեց 1) է: Քանի՞ գարնեց կ'լինի 12 չեկերիկը:

424. Պարտիզպանը 16 ամուրի մէջ գազարի սերմ ցանեց, իւրաքանչիւրում 6 մսխալ: Նա ցանքի համար քանի՞ մսխալ սերմ գործածեց:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն:

425. Երկրագործը իւր վեց արտի մէջ հաւասար կերպով 18 ջուալ ցորեն ցանեց: Իւրաքանչիւր արտի համար ինչքան ցորեն գնաց:

426. Մի աշակերտ 42 բաւը հաւասար կերպով 7 տոգում տեղաւորեց: Իւրաքանչիւր տոգի մէջ քանի՞ բաւ մտաւ:

427. Ֆուսը 12 դիւլիմ (ըթաչափ) է: Մի ֆուս երկարութիւն ունեցող երկաթի թելից նորա բաւորդ մասը կարեցին: Կտրածը քանի՞ դիւլիմ է:

428. Մի մարդ 35 կոպէկի փոստային մարկաներ գնեց, իւրաքանչիւրը՝ 7-ը կոպէկով: Նա քանի՞ մարկայ գնեց:

429. Փուրը 40 գրուանեայ 2) է: Մի փութ շաքարը քանի՞ շաքաթ բաւականացաւ, եթէ որ ամեն մի շաբթում 8 գրուանքայ շաքար էին գործ ածում:

430. Մի դերձակ սերթուկների համար 32 արշին մահուդ գործածեց. իւրաքանչիւր սերթուկին 4 արշին գնաց: Նա քանի՞ սերթուկ կարեց:

1) Գարնեցը—կէս խան է, կամ վեց գրուանքայից մէկ քառորդ (չաբէք) պակաս:

2) Գրուանքան, տեղական գործածութեամբ, կոչուած է և՛ լասիլ. բառիւր=նուպիմ կամ չորս քառորդին. լիսը զանազան է լինում՝ 9, 10, 12, և 30 գրուանքայ:

431. Եօթը մշակ՝ հաւասար կերպով՝ 56 ախան գունդ շինեցին: Իւրաքանչիւր մշակ քանի՞ գունդ շինեց:

432. Մի գիւղացի ծրարը փոստով ուղարկելու համար 72 կոպէկ վճարեց, գրուանքան 9 կոպէկով: Ծրարը ինչքան էր քաշում:

433. Աղախինը 36 կոպէկի նաւթ գնեց. իւրաքանչիւր գրուանքայի համար 6 կոպէկ վճարեց: Նա քանի՞ գրուանքայ նաւթ գնեց:

434. Մի գիւղ 64 տուն ունի. նոցա ութերորդ մասը տախտակով է ծածկուած: Տախտակով ծածկուած տները քանի՞սն են:

435. Վառարան շինողը երկու վառարան նորոգելու համար հաւասար կերպով 24 աղիւս գործածեց: Իւրաքանչիւր վառարանի նորոգութեան համար քանի՞ աղիւս գնաց:

436. Մշակները 96 սափէն փայտը 3 օրում սղոցեցին՝ օրէնը հաւասար բանելով: Նոքա իւրաքանչիւր օրում քանի՞ սափէն փայտ էին սղոցում:

437. Բրուտը ծախելու համար 50 կճուճ շուկայ բերեց և դոցա կէսը ծախեց: Ծախած կճուճները քանի՞սն են:

438. Մի գիւղացի կին 60 գրուանքայ իւղը 4 հաւասար իւղամանի մէջ տեղաւորեց: Նա իւրաքանչիւր իւղամանը ո՞րքան իւղ ամեց:

439. Հաշուապահը կապոցներով 90 թիւթ փոստային թուղթ գնեց. իւրաքանչիւր կապոց 6 թիւթ էր: Նա քանի՞ կապոց թուղթ գնեց:

440. Վաճառականը 100 մանէթի պարտքը հաւասար կերպով չորս ամսում վճարեց: Նա ամսէնը ինչքան էր վճարում:

441. Պարտիզպանը երեք ամուլից հաւասարապէս 54 գլուխ կաղամբ հանեց: Իւրաքանչիւր ամուլից քանի՞ գլուխ կաղամբ ստացաւ:

442. Ոստայնանկը 5 արշին քաթանը մի կարժ թիւից է պատրաստում: Նորան ինչքան թիւ է հարկաւոր 65 արշին քաթան գործելու համար:

443. Մի երեխայ 72 ընկոյզը 6 հաւասար կիտուկ արեց: Իւրաքանչիւր կիտուկի մէջ քանի՞ ընկոյզ կայ:

444. Փողոցի երկարութիւնը 91 սափէն է. նրբափողոցը նորանից 7 անգամ կարճ է: Ի՞նչ երկարութիւն ունի նրբափողոցը:

445. Դարբինը 81 անուապատ օղակ պատրաստեց. նոցա երրորդ մասը անիւներին հագցրեց: Նա քանի՞ օղակ գործածեց:

446. Երկու ամբարի մէջ հաւասար կերպով 78 չեւովերիկ ցորեն ամեցին: Իւրաքանչիւր ամբարի մէջ ամած ցորենը քանի՞ չեւովերիկ է:

447. Գրուանքան *) 96 մսխալ է: Ոսկերիչը մի գրուանքայ արծաթից գդախներ շինեց. իւրաքանչիւր գդախի համար նա 4 մսխալ արծաթ գործածեց: Ոսկերիչը քանի՞ գդախ շինեց:

448. Փոստային կայարանի տէրը 13 ձի կերակրելու համար օրէնը հաւասարապէս 39 զարնեց զարի էր տալիս: Իւրաքանչիւր ձին քանի՞ գրուանքայ զարի է ստանում:

449. Դարբինը 51 գերանդին հաւասարապէս 17 օրում նորոգեց: Նա օրէնը քանի՞ գերանդի էր նորոգում:

450. Գիւղացին մի ձիու համար 90 մանէթ վճարեց, իսկ մէկ կովի համար—45 մանէթ: Կովը ձիուց քանի՞ անգամ արժան եղաւ:

451. Շոգենաւին 72 վերստ տարածութիւնը անցնելու համար ինչքան ժամանակ է հարկաւոր, եթէ որ նա մի ժամում պէտք է 12 վերստ գնայ:

452. Մրգավաճառը 70 գրուանքայ հաղարջը հաւասար կերպով 35 կողովի մէջ ամեց: Իւրաքանչիւր կողովի մէջ քանի՞ գրուանքայ հաղարջ մտաւ:

453. Թռչնորսը 14 վանդակի մէջ՝ հաւասար կերպով 56 զեղձանիկ դրեց: Նա իւրաքանչիւր վանդակում քանի՞ զեղձանիկ տեղաւորեց:

*) Քսան գրուանքան կամ կէս փութը մի քանի տեղերում, գաւառական բարբառով, կոչւում է կ' քիլանի:

454. Մի կալուածատէր տղամարդ մշակին օրական 75 կոպէկ վճարեց. իսկ կին—մշակին՝ 25: Կինարժատը տղամարդից քանի՞ անգամ պակաս ստացաւ:

455. Ոսկերէիչը մի գրուանքայ ոսկուց 24 միմեանց հաւասար մատանիներ շինեց: Ամեն մի մատանու համար քանի՞ մսխալ ոսկի գնաց:

456. Հրաձգութեան ժամանակ 16 զինուոր հաւասար կերպով 80 գնդակ արձակեցին: Իւրաքանչիւր զինուոր քանի՞ գնդակ արձակեց:

457. Մի գիւղացի կին չորացրեց՝ 81 գրուանքայ ծիրան և 27 գրուանքայ դեղձ: Դեղձը ծիրանից քանի՞ անգամ քիչ չորացրեց:

458. Մի մարդ 70 ծաղկաւել քաղեց, իսկ նորա կինը— 14: Մարդը կնոջից քանի՞ անգամ աւելի ծաղկաւել քաղեց:

459. Տանտէրը ձմեռ ժամանակ դոմում 24 կով ջրելու համար օրէնը հաւասար կերպով 72 դոյլ ջուր է գործածում: Մէկ օրում մի կովի համար սրբան ջուր է հարկաւոր:

460. Մանրավաճառը 12 գիւղացուց հաւասար կերպով 96 գրուանքայ այծի մազ գնեց: Նա որքան մազ գնեց իւրաքանչիւր գիւղացուց:

461. Մի գիւղացի կին իւր 75 կոպէկ պարտքը հարեան կնոջը 15 կոպէկանոցներով վճարեց: Նա լանի՞ տասնուհինգ կոպէկանոց տուեց:

462. Բանջարանոցի երկարութիւնը 84 սաժէն է, իսկ պարտէզինը—28: Բանջարանոցը պարտիզից քանի՞ անգամ է երկար:

463. Մի արհեստաւոր 91 դոյլը հաւասարապէս 13 օրում շինեց: Նա օրէնը քանի՞ դոյլ էր շինում:

464. Մայրակի անիւրը 90 ֆուտ տարածութեան վերայ 15 անգամ պտոյտ եկաւ: Անիւրի շրջապատը ի՞նչ մեծութիւն ունի:

465. Տանտիկինը 36 կոպէկով 24 գրուանքայ ալ գնեց: Նորան ի՞նչքան կ'ստէր 12, 6, 8, 4, 2 գրուանքայ ալը:

466. Երկու գրուանքայ սխեռը 9 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել՝ 4, 6, 14, 16, 20, 22 գրուանքայ սխեռի համար:

467. Թէյ ծախողը մի փութ թէյի համար 56 մանէթ վճարեց: Ի՞նչքան կ'արժենայ՝ 20, 10, 5 գրուանքայ թէյը:

468. Հացի փութը 60 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել՝ 20, 8, 10, 4, 2 գրուանքայ հացի համար:

469. Ոսկերէիչը արծաթի գրուանքան 32 մանէթով է ծախում: Նորան ի՞նչքան պէտք է վճարել 48, 12, 3, 24, 6 մսխալ արծաթի համար:

470. Մի գրուանքայ պղինձը 72 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել 48, 24, 12, 4 մսխալ պղինձի համար:

471. Մի փութ մեղրամոմի համար ի՞նչքան պէտք է վճարել, եթէ որ 8 գրուանքան 7 մանէթ արժէ:

472. Մի փութ ցորենի ալիւրի համար ինչքան պէտք է վճարել, եթէ որ 5 գրուանքայ ալիւրը 9 կոպէկ արժէ:

473. Տանտիկինը մի գրուանքայ կարագ իւրի համար ի՞նչքան վճարեց, եթէ որ 16 մսխալը նրան 12 կոպէկ նստեց:

474. Մի գրուանքայ աղուամազի համար ի՞նչքան պէտք է վճարել, եթէ որ 12 մսխալ աղուամազը 8 կոպէկ արժէ:

475. Սուրճի գրուանքան ի՞նչքան արժէ, եթէ որ 3 մսխալը 2 կոպէկ է:

476. Տանտէրը ձաւար գնեց, փութը 60 կոպէկով: Նորան ի՞նչքան նստեց 12, 16, 28, 32, 24 գրուանքայ ձաւարը:

477. Մի փութ ներկը 72 մանէթ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել՝ 15, 35, 25, 30 գրուանքայ ներկի համար:

478. Մի թռչնորս մի փութ կանեփի սերմի համար մի մանէթ վճարեց: Նորան ի՞նչքան նստեց—6, 14, 18, 30, 16, 24, 32, 26, 34, 28, 38 գրուանքայ սերմը:

479. Տանտէրը մի գրուանքայ պանրի համար 64 կոպէկ վճարեց: Նորան ի՞նչքան նստեց՝ 9, 15, 42, 30, 54, 21, 66, 36, 45, 75 մսխալ պանիրը:

480. Մի գրուանքայ թէյը 84 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել՝ 40, 56, 64, 72, 80 մսխալ թէյի համար:

481. Մի փութ ցորենի ալիւրի համար ի՞նչքան պէտք

- է վճարել, եթէ որ 12 գրուանքան 30 կոպէկ արժէ:
482. 24 գրուանքայ ծխախոտը 45 մանէթ արժէ: Մի փուլը ի՞նչքան կարժենայ:
483. 15 գրուանքայ ձկնկիթը 24 մանէթ արժէ: Մի փուլը ի՞նչքան կ'արժենայ:
484. Գուլպայ գործող կինը մի գրուանքայ բրդի համար ի՞նչքան վճարեց, եթէ որ 64 մսխալ բուրդը նորան 56 կոպէկ նստեց:
485. Մի գրուանքայ սալորի համար ի՞նչքան պէտք է վճարել, եթէ որ 36 մսխալ սալորը 24 կոպէկ արժէ:
486. Երկու փուլ շաքարը 16 մանէթ արժէ: Ի՞նչքան փող է հարկաւոր՝ 3, 5, 7, 9 փուլ շաքար գնելու համար:
487. 13 գրուանքայ կեռասը 65 կոպէկ արժէ: Ի՞նչքան կարժենայ՝ 7, 12, 15, 17, 19 գրուանքայ կեռասը:
488. Գիւղացին մի փուլ աղի համար ի՞նչքան վճարեց, եթէ որ 7 գրուանքայ աղը 14 կոպէկ արժէ:
489. 48 սաժէն հաստ պարանին 72 կոպէկ ճարեցին: Ի՞նչքան նստեց՝ 24, 12, 8, 4, 2, 6, 16 սաժէն պարանը:
490. 4 արշին երիզը 7 կոպէկ արժէ: Ի՞նչքան արժէ՝ 8, 12, 16, 20, 28, 32, 36, 44, 48, 52 արշին երիզը:
491. Մէկ ղերձակ կին մի արշին ժապաւէնի համար մի մանէթ վճարեց: Նորան ի՞նչքան նստեց՝ 8, 4 վերջոկ ժապաւէնը:
492. Մի ֆուտ կարմիր պղնձեայ թելը 18 կոպէկ արժէ: Ի՞նչքան է հարկաւոր վճարել՝ 2, 4, 6 դիւլիմ պղնձեայ թելին:
493. Մի ֆուտ ղեղնապղնձի թելը 16 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել 3, 6 դիւլիմ թելին:
494. Մի արշին բրդէ կտորը ի՞նչքան արժէ, եթէ որ 4 վերջոկը 18 կոպէկ է:
495. Մի ֆուտ պողպատի կտորը ի՞նչքան արժէ, եթէ որ 3 դիւլիմը 14 կոպէկ է:
496. Մի արշին սպինագործ բանուածքը 28 կոպէկ արժէ: Ի՞նչքան կարժենայ՝ 12, 20, 24, 36 վերջոկ բանուածքը:
497. Մի ֆուտ երկաթի թելը 15 կոպէկ արժէ: Ի՞նչ-

- քան պէտք է վճարել՝ 8, 20, 16, 28, 32 դիւլիմ երկաթի թելին:
498. Մի արշին երիզի համար ի՞նչքան պէտք է վճարել, եթէ որ 12 վերջոկը 27 կոպէկ արժէ:
499. 10 վերջոկ քաթանը 25 կոպէկ արժէ: Մի արշին քաթան գնելու համար ի՞նչքան փող է հարկաւոր:
500. Մի ֆուտ պղնձի կտորը ի՞նչքան արժէ, եթէ որ 8 դիւլիմը 34 կոպէկ է:
501. 4 արշին մահուղը 28 մանէթ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել 1, 5, 7, 11, 14 արշին մահուղին:
502. 5 ֆուտ երկաթի թելը 70 կոպէկ արժէ: Ի՞նչքան արժէ՝ 2, 3, 4, 6 ֆուտ երկաթի թելը:
503. Մի արշին թաւիշի համար ի՞նչքան պէտք է վճարել, եթէ որ 6 վերջոկը 9 մանէթ արժէ:
504. Մի ֆուտ պողպատի կտորը ի՞նչքան արժէ, եթէ որ 7 դիւլիմը 42 կոպէկ է:

ԽՆԴԻՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

505. Մի հացթուխ երկու տեսակ ալիւր ունէր. նա առաջին տեսակից 37 գրուանքայ վերցրեց, իսկ երկրորդից— 25. այդ բոլորից խմոր հունցեց և հաց թխեց: Թխած հացերը որքան էին քաշում, եթէ որ հացի աճոււմը 19 գրուանքայ է:
506. Ուսումնարանի մեծ բաժանման մէջ 42 աշակերտ կայ, միջինում՝ 13 աշակերտ մեծից պակաս, իսկ փոքր բաժանմունքում՝ 28 աշակերտ միջինից աւելի: Փոքր բաժանման մէջ քանի՞ աշակերտ կայ:
507. Կալուածատէրը 3 տուն նորոգեց. առաջինի նորոգութեան համար նա 24 մանէթ վճարեց, երկրորդի համար՝ 27, իսկ երրորդը նորոգելու համար առաջին երկուսից 19 մանէթ պակաս վճարեց: Կալուածատէրը երրորդ տան նորոգութեան համար որքան վճարեց:
508. Մի պարտիզպան 4 խնձորենուց խնձորներ քաղեց— մէկից 16 խնձոր, իսկ մնացածների իւրաքանչիւրից՝ 19

հատ: Նա ընդամենը քանի՞ խնձոր քաղեց:

509. Ուսուցիչը աշակերտներին բաժանեց՝ 17 թերթ սպիտակ և չորս անգամ դորանից աւելի՝ մոխրագոյն թուղթ: Բաժանած թուղթը ընդամենը որքան էր:

510. Դաստան մէջ նստարանները երեք կարգ են դարսած, ամեն մէկում—չորս հատ. իւրաքանչիւր նստարանի վերայ 5 աշակերտ է նստած: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ դասատան մէջ:

511. Կալուածատէրը ձիաների վերայ 3 օրում 99 գարնեց գարի գործածեց. իւրաքանչիւր ձիուն օրէնը 3 գարնեց էր տալիս: Նա քանի՞ ձի ունէր:

512. Մի դերձակ կին 42 արշին քաթան ունէր. 18 արշինը նա բարձի երեսները համար գործածեց, իսկ մնացածից սաւաններ կարեց: Դերձակ կինը քանի՞ սաւան կարեց, եթէ որ մի սաւանին 6 արշին քաթան գնաց:

513. Հովիւը 8 ոչխար խուզեց և իւրաքանչիւրից 8 գրուանքայ բուրդ ստացաւ. լուանալուց յետոյ այդ բուրդը 42 գրուանքայ էր քաշում: Բրդի ծանրութիւնը լուանալուց ինչքան պակասեց:

514. Երկու աչք ունեցող ջրաղաց 56 չետվերտ ցորեն բերին աղալու. նորա մի աչքը օր ու գիշեր 8 չետվերտ ցորեն էր աղում, իսկ միւսը նոյնքան ժամանակում՝ 6 չետվերտ: Ջրաղացը բոլոր ցորենը քանի՞ օր ու գիշերում կ'աղայ:

515. Ծոթավաճառը չթի արշինը դնեց 8 կոպէկով, իսկ ծախեց 11-ով. նա մի կտոր չթի ծախելուց 57 կոպէկ աշխատանք ստացաւ: Չթի կտորը քանի՞ արշին էր:

516. Մի գիւղացի 9 թիւից հաղարջ քաղեց. իւրաքանչիւրից 7 գրուանքայ դուրս եկաւ. բոլոր հաղարջը նա հաւասար կերպով 21 կողովի մէջ ամեց: Իւրաքանչիւր կողովի մէջ որքան հաղարջ մտաւ:

517. Գիւղացի կինը 5 գրուանքայ քաշ ունեցող կճուճը իւզով լցրեց և 9 գնողների վերայ հաւասար կերպով ծախեց: Իւրաքանչիւր գնող ինչքան իւզ գնեց, եթէ որ կճուճը իւզի հետ միասին 32 գրուանքայ էր քաշում:

518. Մեծ եղբայրը 76 խուրձ ցորեն հնձեց, իսկ փոքրը

— նորանից 4 անգամ պակաս: Երկու եղբայրը միասին քանի՞ խուրձ հնձեցին:

519. Դերձակը գնեց՝ 24 արշին մոխրագոյն, երեք անգամ դորանից շատ՝ սև, իսկ ութ անգամ սևիցը պակաս— կապոյտ մահուգ: Նա ինչքան կապոյտ մահուգ գնեց:

520. 3 չետվերիկ ցորենը 96 գրուանքայ է քաշում. մի չետվերիկ սիսեռը մի չետվերիկ ցորենից 18 գրուանայով ծանր է: Երկու չետվերիկ սիսեռը որքան է քաշում:

521. Գիւղացին առաջ 24 տրեխ արեց, իսկ յետոյ՝ 32: Բոլոր տրեխների համար ինչքան փոկ գնաց, եթէ որ մի գոյգի վերայ 3 գրուանքայ փոկ գործածուեց:

522. Պարտիզպանը առաջին ամուսնից 14 գլուխ կաղամբ հանեց, իսկ երկրորդից — 9. առաջին ամուսնի մէջ էլի մնաց՝ 16 գլուխ, իսկ երկրորդում—15: Նոցանից ճր ամուսնի մէջ աւելի կաղամբ կար և որքանով աւելի:

523. Գիւղացին երեք արտում չորս-չորս չետվերտ գարի ցանեց և մէկին հինգ օգուտ ստացաւ: Սերմնացուի համար գործ դրածը դուրս գալուց յետոյ գիւղացին դարձեալ ինչքան գարի ունեցաւ:

524. Սայլակի առաջին ախան շրջապատը 4 ֆուտ է, իսկ յետինը—6: 60 ֆուտ տարածութեան վերայ առաջին ակը երկրորդից քանի՞ պոտոյտ աւելի կ'անէ:

525. Ուսուցիչը 4 դաստայ թուղթ ունէր. այդ թղթի երրորդ մասը նա 8 աշակերտի վերայ հաւասար բաժանեց: Իւրաքանչիւր աշակերտ ինչքան թուղթ ստացաւ:

526. Գիւղացին 51 արշին երկարութիւն ունեցող հաստ պարանը 4 կտոր արեց, այնպէս որ առաջին կտորը 14 արշին դուրս եկաւ, երկրորդը—13, իսկ մնացած երկու կտորը՝ հաւասար: Վերջին երկու կտորներն ի՞նչ երկարութիւն ունեցան:

527. 3 գրուանքայ ալիւրից 4 գրուանքայ հաց է դուրս գալիս: Ինչքան ալիւր է հարկաւոր, որ 14 հաց թխուի, իւրաքանչիւրը 6 գրուանքայ ծանրութեամբ:

528. Դարբինը 63 գրուանքայ երկաթ ունէր. դոցա եօթներորդ մասը նա մեխեր շինելու համար գործածեց, իսկ

մնացած երկաթից մանդաղներ շինեց, որոնց իւրաքանչիւրի համար 2 գրուանքայ երկաթ գնաց: Դարբինը քանի՞ մանգաղ շինեց:

529. Վառելափայտը բակում կիտուկներով է դարսած՝ 5 կիտուկի մէջ կայ եօթ—եօթ, իսկ մնացած 6-ում ութ-ութ սածէն: Բակի մէջ դարսած վառելափայտը ընդամենը քանի՞ սածէն է:

530. Աշակերտուհին գրքից 14 տող արտագրեց, իւրաքանչիւր տողում—6 բառ. այդ բառերի եօթներորդ մասը նա սխալ էր արտագրել: Ուղիղ արտագրածը քանի՞ բառ էր:

531. Շրջավաճաւը մի գիւղում 19 սագ գնեց, միւսում —17, իսկ երրորդում—առաջին երկուսից 2 անգամ պակաս: Նա ընդամենը քանի՞ սագ գնեց:

532. Մի երկրագործ 5 հատ տափանի փոցխ ունէր. 2 փոցխին չորս-չորս ատամ ամրացրեց, իսկ 3-ին հինգ-հինգ, որից յետոյ նորա մօտ դարձեալ 27 ատամ մնաց: Նա տափանի փոցխերի համար ընդամենը քանի՞ ատամ ունէր:

533. Սայլակի առաջին ակը միկնոյն տարածութեան վերայ 16 պտոյտ է անում, իսկ յետեւինը—12: Առաջին ական շրջապատի մեծութիւնը որքան է, եթէ որ յետեւի ական շրջապատը 8 ֆուտ է:

534. Ամբարի մէջ 72 չետվերիկ գարի կար. նրանից առաջ՝ 8 պարկ վերցրին, իւրաքանչիւրում—3 չետվերիկ, իսկ յետոյ՝ 7 պարկ—իւրաքանչիւրում—4 չետվերիկ: Դարձեալ ինչքան գարի մնաց այնտեղ:

535. Տակառի մէջ 48 դոյլ ջուր կար. այդ ջրի կէսը կովերին խմեցնելու համար գործածեցին, իսկ քառորդ մասն էլ ձիաներին խմեցրին: Ինչքան ջուր մնաց տակառում:

536. Կալուածատէրը առաջին գիւղում 14 հնձող—մշակ վարձեց, երկրորդում—առաջինից 3 անգամ աւելի, իսկ երրորդում—առաջին երկուսից 2 անգամ պակաս: Նա ընդամենը քանի՞ հնձող վարձեց:

537. Դարբինը իւր բոլոր պայտերը 14 ձի պայտելու համար գործածեց. առաջին 5 ձիուն նա պայտեց երեք-երեք ոտն, իսկ մնացածներից իւրաքանչիւրին—չորս-չորս ոտը:

Դարբինը ընդամենը քանի՞ պայտ ունէր:

538. Ձկնորսները ուռկանով 96 ձուկը բռնեցին, դոցա բոլորի վեցերորդ մասը գեղարքունի էր, ութերորդը—կարմրախայտ, իսկ մնացածը—կողակ: Նոքա քանի՞ կողակ բռնեցին:

539. Դաշտումը 90 արտ էր ցանած. դոցա կէսը ցորեն էր, վեցերորդ մասը—գարի, հինգերորդը—կորեակ, իսկ մնացածը—հաճար: Քանի՞ արտ էր հաճար ցանած:

540. Պղնձգործը շինեց՝ կոնք, թաւայ, կաթսայ և հեշտաեռ. կոնքը 24 գրուանքայ էր քաշում, թաւան կոնքից 3 անգամ թեթեւ էր, կաթսան թաւայից 6 անգամ ծանր, իսկ հեշտաեռն էլ կաթսայից 29 գրուանքայ պակաս: Հեշտաեռի քաշը որքան էր:

541. Մի հիւսն 8 օրում 87 շրջանակ շինեց. առաջին 3 օրում—օրէնը 13 շրջանակ էր շինում, իսկ հետեւ 4 օրում օրական 9 շրջանակ: Ութերորդ օրուայ շինած շրջանակները քանի՞սն են:

542. Ձինուորները հանգստանալու համար գիւղումը այսպէս տեղաւորուեցան՝ 56 զինուորից ամեն մի խրճիթ չորս-չորս հոգի մտան, 34-ից՝ երկ-երկու և 48-ից էլ՝ երեք-երեք հոգի: Դոքա ընդամենը քանի՞ խրճիթ էին բռնել:

543. Որսորդը 78 հատ աղուէսի մորթի ունէր. մի կաշեգործի վերայ նա բոլոր մորթու վեցերորդ մասը ծախեց, միւսին մնացածի հինգերորդը, իսկ բոլոր մնացածն էլ հաւասար կերպով 4 վաճառականների տուեց: Ամեն մի վաճառական քանի՞ մորթի գնեց:

544. Թիւզացին ցանքի համար 75 չետվերիկ ցորեն գործածեց. առաջին երեք արտում իւրաքանչիւրին գնաց՝ 5 չետվերիկ, հետեւեալ 4 արտի ամեն մէկին—9, իսկ մնացածների իւրաքանչիւրին՝ 12 չետվերիկ: Նա ընդամենը քանի՞ արտ ցանեց:

545. Մի հնձուոր 19 խուրձ հնձեց, միւսը երկու անգամ աւելի, իսկ երրորդը երկրորդից 15-ով պակաս: Բոլոր խրճները գիղեցին, իւրաքանչիւր դէղում 40 խուրձ դարսելով: Նոքա քանի՞ դէղ դրեցին:

546. Գիւղացին մի դաշտից 14 չեովերիկ կարտոֆիլ հանեց, իսկ միւսից՝ 4 անգամ աւելի. հաւաքած կարտոֆիլը նա պարկերի մէջ ածեց այսպէս՝ 42 չեովերիկից իւրաքանչիւր պարկը ածեց՝ երեք-երեք, իսկ մնացածից ամեն մէկի մէջ չորս-չորս չեովերիկ: Նա կարտոֆիլը քանի՞ պարկի մէջ ածեց:

547. Ալաիը 20 փուա քրինձը 60 մանէթով գնեց. բըրնձի չորրորդ մասը փչացաւ և չ'ծախուեց: Նա մնացածի փութը որքանով պէտք է ծախէ, որ ֆլաս չ'կրէ:

548. Հայրը իւր երկու որդոց մէջ մի մանէթն այնպէս բաժանեց, որ մեծ եղբայրը ստացաւ այնքան 10 կոպէկանոց, որքան որ փոքրը՝ 15 կոպէկանոց: Իւրաքանչիւր որդին ինչքան փող ստացաւ:

549. Մի գիւղացու ընտանիքում հաւասար թուով տղայք ու աղջկերք կան. բոլոր երեխաները գնացին դաշտ և 57 կապուկ ծնեբեկ քաղեցին, որից իւրաքանչիւր տղան 7 կապուկ քաղեց, իսկ իւրաքանչիւր աղջիկ—12: Ընտանիքի մէջ քանի՞ երեխայ կայ:

550. Գիւղացին կալ կասելուց յետոյ 72 փութ ցորեն ստացաւ, օրէնը 80 խուրձ կասելով: Նա քանի՞ օր բանեց, եթէ որ 40 խրճնից 4 փութ հատիկ էք ստանում:

551. Թուչնորսը 28 դեղձանիկը հաւասարապէս 7 վանդակի մէջ դրեց: Հինգ վանդակում քանի՞ դեղձանիկ կայ:

552. Ատաղձագործը 16 օրուայ աշխատանքի համար 32 մանէթ վարձ ստացաւ: Նա 13 օրում ինչքան փող աշխատեց:

553. Շողենաւը 90 վերստ տարածութիւնը 8 ժամում անցկացաւ: Ինչքան տարածութիւն անցկացաւ 4 ժամում:

554. Գերձակը 15 վերարկուի համար հաւասար կերպով 78 արշին մահուդ գործածեց: Ինչքան մահուդ գնաց 5 վերարկուին:

555. 12 գրուանքայ կտաւահատի սերմից 3 գրուանքայ ձէթ է դուրս գալիս: Ինչքան ձէթ դուրս կգայ 2 չեովերիկ սերմից, եթէ որ սերմի չեովերիկը 42 գրուանքայ է քաշում:

556. Գիւղացին 44 չեովերիկ ցորենը հաւասարապէս 8 ջուալի մէջ ածեց: Նա 6 ջուալի մէջ ինչքան ցորեն ածեց:

557. 15 սաժէն փայտի համար 50 մանէթ վճարեցին: Ինչքան է վճարուած 12 սաժէնին:

558. 15 գրուանքայ ցորենից 10 գրուանքայ ձաւար է ստացւում: Ինչքան ցորեն է հարկաւոր ծեծել, որ 66 գրուանքայ ձաւար ստանան, եթէ որ ցորենի չեովերիկը 33 գրուանքայ է քաշում:

559. 6 սաժէն կաղնի փայտը այրուելիս տալիս է այնքան տաքութիւն, ինչքան տաքութիւն որ տալիս է 8 սաժէն կեչի փայտը: Ինչքան կեչի փայտ է հարկաւոր, որ 79 սաժէն կաղնու փայտին փոխարինէ:

560. Տասը մշակ մի դործ 7 օրում աւարտեցին: Նոյն գործը քանի՞ օրում կ'աւարտեն 5 մշակը:

561. Մի փողոց 24 քարտաշ 5 օրում քարեցին: Քանի՞ քարտաշ պէտք է վարձել, որ նոյն փողոցը 15 օրում քարեն:

562: Սենեակը պաստառելու համար հարկաւոր է 15 վերշոկ լայնութիւն ունեցող 18 կտոր գունաւոր թուղթ: Նոյն սենեակը պաստառելու համար քանի՞ կտոր գունաւոր թուղթ է հարկաւոր, եթէ որ թղթի երկարութիւնը լինի մի-ենոյն, իսկ լայնութիւնը 10 վերշոկ:

563. 35 զինուորի համար 10 օրուայ պաշար—պաքսիմատ—էր պատրաստած: Նոյն պաշարը 25 զինուորի համար ինչքան ժամանակ կը բաւականանայ:

564. Կառքի առաջին ական շրջապատը 6 ֆուտ է, իսկ յետինը՝ 9. առաջինը 12 անգամ պտոյտ եկաւ: Յետևի ական քանի՞ անգամ պտտուեց:

565. Երկու եղբայր միասին 61 տարեկան են: Իւրաքանչիւր եղբայր քանի՞ տարեկան է, եթէ որ նոցանից մէկը միւսից 13 տարով մեծ է:

566. Երկու քոյր անտառում 73 գրուանքայ հոն քաղեցին. մեծ քոյրը փոքրից 17 գրուանքայ աւելի քաղեց: Իւրաքանչիւր քոյր թող քաղածը որքան էր:

567. Երկու կտոր երկրի երկարութիւնը 53 արշին է. առաջին կտորը երկրորդից 19 արշինով երկար է: Իւրաքանչիւր կտոր լինի երկարութիւն ունի:

568. Երկու կրտուկի մէջ 40 լրբի կայ. առաջին կի-

տուկը երկրորդից 14 լորիով աւելի է: Իւրաքանչիւր կիւտուկում որքան լորի կայ:

569. Գիւղացին երկու ցանկապատի նորոգութեան համար 32 ձող գործածեց: Նոցանից մէկին երեք անգամ աւելի ձող գնաց, քան թէ միւսին: Իւրաքանչիւր ցանկապատի համար քանի՞ ձող գործածուեց:

570. Երկու արխի երկարութիւնը 56 սաժէն է. իւրաքանչիւր արխ ի՞նչ երկարութիւն ունի, եթէ որ նոցանից մէկը միւսից 3 անգամ կարճ է:

571. Երկու գրքի գինը 1 մանէթ է: Իւրաքանչիւր գիրք որքան արժէ, եթէ որ նոցանից մէկը միւսից 4 անգամ թանկ է:

572. Մէկ գիւղացի 17 փոկաւել քաղեց, իսկ միւսը—28. այդ աւելները նորքա 90 կոպէկով ծախեցին: Իւրաքանչիւր գիւղացին որքան փող պէտք է վերցնէ:

573. Երկու հիւան աթոռներ նորոգելու համար 68 մանէթ ստացան. մէկը 19 աթոռ նորոգեց, իսկ միւսը—15: Իւրաքանչիւր հիւան որքան փող ստացաւ:

574. Երեք եղբայր չորս դաստայ թուղթ գնեցին. մէկը 15 կոպէկ տուեց, միւսը—14, իսկ երրորդը—19: Իւրաքանչիւր եղբայր որքան թուղթ պէտք է ստանայ:

575. Երեք հնձուր 12 մանէթ աշխատեցին. մէկը 8 օր բանեց, միւսը—10, իսկ երրորդը—6: Իւրաքանչիւր հնձուր որքան փող պէտք է ստանայ:

576. Շրջավաճառը կիտրոնների փոխարէն 15 տանձ տուեց: Նա որչափ կիտրոն ստացաւ, եթէ որ իւրաքանչիւր տանձ 6 կոպէկ արժէր, իսկ իւրաքանչիւր կիտրոն—5:

577. Վաճառականը 36 գրուանքայ՝ 2 մանէթանոց՝ թէյի համար մի կտոր մահուդ ստացաւ, արշինը 3 մանէթով: Մահուդի կտորը քանի՞ արշին էր:

578. 80 սաժէն երկարութիւն ունեցող ցանկապատը շինելու համար ատաղձագործները սիւներ տնկեցին՝ մէկը միւսից 4 սաժէն տարածութեան վերայ, որի ժամանակ ցանկապատի իւրաքանչիւր ծայրին կանգնեցրին մէկ-մէկ սիւն: Նորքա ընդամենը քանի՞ սիւն կանգնեցրին:

579. 96 սաժէն երկարութիւն ունեցող փողոցի աջ կող-

մի վերայ լապտերի սիւններ կանգնեցրին՝ մէկը միւսից 8 սաժէն տարածութեան վերայ. միևնոյն ժամանակ իւրաքանչիւր ծայրին մէկ-մէկ սիւն ևս կանգնեցրին: Ընդամենը քանի՞ սիւն է կանգնեցրած:

580. Շրջավաճառը մէկ տասնեակ խոշոր վարունգը 3 տասնեակ մանրերի հետ խառնեց և բոլոր խառնածը առանց օգուտի և ֆլասի ծախեց: Նա ի՞նչ գնով ծախեց խառնուրդի տասնեակը, եթէ որ խոշորների տասնեակը 12 կոպէկ էր նստել նորան, իսկ մանրերինը—8:

581. Սանութպանը 5 գրուանքայ, 3 կոպէկանոց, ալը խառնեց 5 գրուանքայ՝ 5 կոպէկանոց՝ աղի հետ. բոլոր խառնուրդը առանց օգուտի և ֆլասի ծախեց: Սառնուրդ աղի գրուանքան ի՞նչ գնով ծախեց:

582. Սանութպանը 6 գրուանքայ, 3 կոպէկանոց, բրինձը խառնեց 5 գրուանքայ՝ 5 կոպէկանոց՝ բրնձի հետ. բոլոր խառնուրդը նա ծախեց և 12 կոպէկ օգուտ ստացաւ: Սառնուրդ բրնձի գրուանքան նա ի՞նչ գնով ծախեց:

583. 4 չեովերտ, 6 մանէթանոց, գարին խառնեցին 7 չեովերտ՝ 4 մանէթանոց՝ գարու հետ. բոլոր խառնուրդը ծախեցին և 14 մանէթ օգուտ ստացան: Սառնուրդ գարու չեովերտը ի՞նչ գնով ծախեցին:

584. Յատակը տախտակամածելու համար 3 արշին երկարութիւն ունեցող 28 տախտակ էր հարկաւոր: Միևնոյն յատակը տախտակամածելու համար ի՞նչքան տախտակ կը հարկաւորուէի, եթէ որ լայնութիւնը միևնոյն լինի, իսկ երկարութիւնը—7 արշին:

585. Նաւալաստի շինութեան համար 6 վերշոկ լայնութիւն ունեցող 15 տախտակ էր հարկաւոր: Նոյն լաստը շինելու համար քանի՞ տախտակ կը հարկաւորուէի, եթէ որ երկարութիւնը միևնոյն լինի, իսկ լայնութիւնը 5 վերշոկ:

586. Երկաթուղու գնացքը 63 վերստ տարածութիւնը 3 ժամում կտրեց, իւրաքանչիւր հետևեալ ժամում առաջուանից 3 վերստ աւելի անցնելով: Երկաթուղին ամեն մի ժամում քանի՞ վերստ կտրեց:

587. Երեք թարէքի վերայ 54 գիրք կար դարսած. ստո-

րին թարեքի գրքերի թիւը միջինից երկու գրքով պակաս էր, իսկ միջին թարեքինը վերեւինից նոյնպէս երկու գրքով պակաս: Ամեն մի թարեքում քանի՞ գիրք կայ:

588. Մի պարտիզում 40 հատ ուռի, լորի և եղևնի ծառեր կան. լորի ծառերը ուռենիներից 3 անգամ, իսկ եղևնիներն էլ լորի ծառերից 2 անգամ աւելի են: Պարտիզի մէջ քանի՞ եղևնի կայ:

589. Մի ձկնորս 84 հատ գեղարքունի, կարմրախայտ և իշխան ձկներ բռնեց. գեղարքունիները՝ կարմրախայտներից, իշխանները՝ գեղարքունիներից երկ-երկու անգամ պակաս էին: Ձկնորսը քանի՞ գեղարքունի բռնեց:

590. Ներկ շինելու համար 2 բաժին մողիկ և 15 բաժին ծծուժք են վերցնում: Ինչքան մողիկ և ծծուժք պէտք է վերցնել, որ 85 գրուանքայ ներկ դուրս գայ:

591. Երեք գրագիր ձեռագրից 84 թերթ արտագրեցին. առաջինը երկրորդից, իսկ երկրորդը երրորդից՝ երկ-երկու անգամ աւելի էին արտագրել: Նոքա աշխատանքի վարձը ինչպէ՞ս պէտք է բաժանեն, եթէ որ իւրաքանչիւր 6 թերթ արտագրութեան համար նոցա մէկ մանէթ էին տալիս:

592. Մի ճանապարհորդ կարաւանն ուղարկելուց 6 ժամ յետոյ փոստային իջևանից դուրս եկաւ և միևնոյն ճանապարհով գնաց. կարաւանը մի ժամում 4 վերստ էր անցնում, իսկ ճանապարհորդը—10 վերստ: Ճանապարհորդը փոստային իջևանից ի՞նչ տարածութեան վերայ կարաւանին կըհասնի:

593. Երկու կարաւան միևնոյն օրում Երևանից դուրս եկան և միևնոյն ճանապարհով գնացին. մի կարաւանը դուրս եկաւ առաւօտեան ժամի 4-ին, իսկ միւսը՝ 7-ին. առաջինը մի ժամում 4 վերստ էր գնում, իսկ երկրորդը—6: Երկրորդ կարաւանը Երևանից ի՞նչ հեռաւորութեան վերայ հասաւ առաջինին:

594. Ալափը 8 չետվերտ՝ 4 մանէթանոց՝ գարին մի ուրիշ տեսակ 8 չետվերտ գարու հետ խառնեց և ծախեց՝ առանց աշխատանքի ու վնասի—չետվերտը 5 մանէթով: Ալափի ունեցած երկրորդ տեսակ գարու չետվերտը որքան արժէր:

595. Խանութպանը 16 գրուանքայ՝ 2 կոպէկանոց՝ խո-

շոր ալը 9 գրուանքայ մանր աղի հետ խառնեց. բոլոր խառնուրդը նա 85 կոպէկով ծախեց և 17 կոպէկ աշխատանք ստացաւ: Մանր աղի գրուանքան ինչքան արժէր:

596. Վաճառականը 3 գրուանքայ՝ 5 կոպէկանոց՝ բլրինձը ուրիշ տեսակ 5 գրուանքայ բրնձի հետ խառնեց. խառնուրդի գրուանքան 9 կոպէկով ծախեց և բոլորի մէջ 17 կոպէկ աշխատեց: Երկրորդ տեսակ բրնձի գրուանքան որքան արժէր:

597. 85 տակառ ջուր պարունակող ջրամբարը 2 խողովակ ունի. մէկ խողովակով մի ըոպէում ներս է թափում 8 տակառ ջուր, միւսով—9: Որքան ժամանակում կըլցուի ջրամբարը, եթէ որ երկու խողովակն էլ միանգամից բաց թողնեն:

598. 72 տակառ ջուր պարունակող ջրամբարը 2 ծորակ ունի. մի ծորակով տակառը 12 ըոպէում է լցւում, իսկ միւսով—6: Ջրամբարը որքան ժամանակում կըլցուի, եթէ որ միանգամից 2 ծորակը բաց անեն:

599. Երկու գիւղացի միասին 84 ոչխար ունէին. երրորդ առաջինը երկրորդի վերայ 18 ոչխար ծախեց, այն ժամանակ երկրորդը առաջինից 6 անգամ աւելի ոչխար ունեցաւ: Իւրաքանչիւր գիւղացի առաջ քանի՞ ոչխար ունէր:

600. Մի ուսումնարանում 85 տղայ և աղջիկ կայ. երրորդ նորա մէջ դարձեալ 11 տղայ մտան, այն ժամանակ տղայոց թիւը աղջկերանցից 5 անգամ աւելացաւ: Քանի՞ աղջիկ կայ ուսումնարանում:

601. Երկու հարեան գիւղը իւրեանց կամրջի նորոգութեան համար, տնահաշուով, 20 մանէթ վճարեցին: Իւրաքանչիւր գիւղ ինչքան վճարեց, եթէ որ մի գիւղում 48 տուն կար, իսկ միւսում—32:

602. Երկու սայլապան պայման կոպեցին 35 մանէթով միատեսակ բռներ տեղափոխել—մէկը 57, իսկ միւսը 38 վերստ տարածութեան վերայ: Նոցանից իւրաքանչիւրը ինչքան փող պէտք է ստանայ:

603. 9 գրուանքայ՝ 4 կոպէկանոց՝ ալիւրը խառնեցին 3 գրուանքայ ուրիշ տեսակ ալիւրի հետ. բոլոր խառնուրդը

ալիւրը ծախեցին, առանց աշխատանքի և ֆլասի, գրուանքան 5 կոպէկով: Երկրորդ տեսակ ալիւրի գրուանքան որբան արժէր:

604. Սանութպանը 5 գրուանքայ՝ 7 կոպէկանոց՝ ցորենի ալիւրը 2 գրուանքայ՝ 10 կոպէկանոց՝ ալիւրի հետ խառնեց. նա խառնուրդը ծախեց և 6 կոպէկ ֆլասուեց: Սանութպանը խառնուրդի գրուանքան սրքանով ծախեց:

605. Վաճառականը 5 գրուանքայ՝ 5 կոպէկանոց՝ սիսեռը 3 գրուանքայ 8 կոպէկանոց՝ սիսեռի հետ խառնեց. նա բոլոր խառնուրդը ծախեց և մէջը մէկ կոպէկ ֆլասուեց: Նա խառնած սիսեռի գրուանքան սրքանով ծախեց:

606. 10 հիւան 6 օրում 45 մանէթ աշխատեցին: 2 օրում 2 հիւան սրքան փող աշխատեցին:

607. 18 մշակ մի արտի ցորեն 4 օրում հնձեցին: Նոյն արտը 3 օրում հնձելու համար քանի՞ մշակ է հարկաւոր:

608. 9 փութ ապրանքը 18 վերստ տեղափոխելու համար 32 կոպէկ վճարեցին: Ի՞նչքան պէտք է վճարել 27 փութ ապրանքը 6 վերստ տեղափոխելու համար:

609. Կառապանը 8 ձի կերակրելու համար 10 օրում 60 փութ խոտ էր տալիս: Ի՞նչքան խոտ դուրս կընայ 2 ձիու համար 30 օրում:

610. 4 մեքենայ 6 ժամում 96 սաժէն լար են ձգում: Ի՞նչքան լար կը ձգեն երեք մեքենան 7 ժամում:

611. 6 լապտերի մէջ երեք շարժում 72 գրուանքայ նաւթ է այրուել: 5 լապտերի մէջ 2 շարժում սրքան նաւթ կ'այրուի:

612. 26 արշին երկարութիւն և 24 վերշոկ լայնութիւն ունեցող մահուդ պատրաստելու համար 12 գրուանքայ բուրդ է հարկաւոր: 20 վերշոկ լայնութիւն ունեցող 65 արշին մահուդ պատրաստելու համար ինչքան բուրդ է հարկաւոր:

613. 56 փութ ապրանքը 20 վերստ տեղափոխելը 64 կոպէկ արժէ, 21 փութ ապրանքը 45 վերստ տեղափոխելը սրքան կ'արժենայ:

614. Արհեստանոցի տէրը հաշուեց, որ իւր առած նաւթը միայն 16 օր կը բաւականանայ, եթէ ամենայն օր 18 լապ-

տերները—օրէնը 6 ժամ վառուին: Այդ նաւթը քանի՞ օր կը բաւականանայ, եթէ որ 12 լապտերը օրական 8 ժամ վառելու լինեն:

615. Մի մանուկ 60 թերթ սպիտակ և մոխրագոյն թուղթ ունէր. երրոր նա 15 թերթ սպիտակ և 27 թերթ մոխրագոյն թուղթ գործածեց, այն ժամանակ նորա մօտ երկու տեսակից հաւասար մնաց: Մանուկը քանի՞ թերթ սպիտակ և քանի՞ թերթ մոխրագոյն թուղթ ունէր:

616. Փոստային կայարանի տէրը երկու գոմում 43 ձի ունէր. երրոր ճանապարհորդների համար երկու գոմից հաւասար թուով ձիաններ դուրս թողին, այն ժամանակ առաջին գոմում մնաց 15 ձի, իսկ երկրորդում—6: Իւրաքանչիւր գոմի մէջ քանի՞ ձի կար:

617. Երկու գիւղացի միևնոյն ժամանակ երկու գիւղից միմեանց հանդէպ դուրս եկան. նոցանից մէկը մի ժամում 3 վերստ էր անցկենում, իսկ միւսը—5: Գիւղացիները սրքան ժամանակից յետոյ միմեանց կը պատահեն, եթէ որ գիւղերի միջի տարածութիւնը 24 վերստ է:

618. Երկու ճանապարհորդ միևնոյն ժամանակ երկու քաղաքից միմեանց հանդէպ դուրս եկան. մի ճանապարհորդը մի ժամում անց էր կենում 12 վերստ, իսկ միւսը—13: Նոքա սրքան ժամանակից յետոյ միմեանց պատահեցին, եթէ որ քաղաքների միջի տարածութիւնը 100 վերստ էր:

619. Զրամբարի մէջ երկու խողովակ է բերուած. մի խողովակից մի րոպէում ներս է թափուում 10 գոյլ ջուր, իսկ միւսից դուրս է գնում մի րոպէում—6 գոյլ: Զրամբարումը ինչքան ջուր կը լինի, եթէ որ 2 խողովակն էլ 7 րոպէ բաց թողնեն:

620. 80 գոյլ ջուր պարունակող աւազանը երկու ծորակ ունի. մէկ ծորակով աւազանը 10 րոպէում է լցւում, իսկ միւսով բոլոր ջուրը լիք աւազանից 16 րոպէում է դուրս գնում: Աւազանի մէջ ինչքան ջուր կը լինի, եթէ որ միանգամից երկու ծորակը 9 րոպէ բաց անեն:

621. Դերձակը առաջին անգամ 60 մանէթի գնեց՝ 18 արշին սև, 8 արշին կապոյտ մահուդ, իսկ երկրորդ անգամ

գնեց՝ 38 մանէթի միևնոյն գնանոց՝ 7 արշին սև և 8 արշին էլ կապոյտ մահուգ: Դերձակը սև մահուգի արշինին լինչքան վճարեց:

622. Կալուածատէրը առաջին անգամ գնեց՝ 100 մանէթի 27 արօր և 19 կացին, իսկ միւս անգամ գնեց՝ միևնոյն գնով՝ 73 մանէթի 18 արօր և 19 կացին: Նա կացնի համար սրբան վճարեց:

623. 14 սաժէն եղևնու և 12 սաժէն կեչու վառելափայտի համար 100 մանէթ է վճարուած: Վառելափայտերից իւրաքանչիւրի սաժէնը որքան արժէ, եթէ որ կեչու փայտը եղևնուց 3 անգամ թանկ է:

624. Ալափը երկու տեսակ ալիւր ունէր՝ մէկը 13 կոպէկանոց, իսկ միւսը—9. նա դոցա խառնեց և գրուանքան 10 կոպէկանոց խառնուրդ ստացաւ: Առաջին տեսակ ալիւրի իւրաքանչիւր գրուանքայի համար երկրորդ տեսակից ինչքան վերցրեց:

625. Երկու տեսակ շաքարաւաղ կար. մէկի գրուանքան 11 կոպէկ արժէր, իսկ միւսինը—16. զոցանից խառնուրդ կազմեցին և գրուանքան 12 կոպէկով ծախեցին: Ամբողջ խառնուրդը ինչքան է քաշում, եթէ որ ստորին տեսակ շաքարաւաղից 72 գրուանքայ է վերցրած:

626. Վաճառականը 15 արշին սև և կապոյտ մահուգը 76 մանէթով ծախեց. սև մահուգի արշինի համար ստացաւ 6 մանէթ, իսկ կապոյտի արշինի համար—4: Նա որքան սև և որքան կապոյտ մահուգ ծախեց:

627. Կարմիր և սպիտակ 30 շիշ գինու համար 78 մանէթ է վճարած. կարմիր գինու շիշը առնուած է 3 մանէթով, իսկ սպիտակինը—2: Իւրաքանչիւր գինուց քանի՞ շիշ է առնուած:

628. Խանութպանը 29 մանէթի 13 փութ ձաւար և բրինձ գնեց. ձաւարի փութը արժէր 1 մանէթ, իսկ բրնձիինը—3: Խանութպանը որքան ձաւար գնեց:

629. Շրջավաճառը երկու տեսակ ընկոյզից 12 փութ խառնուրդ պատրաստեց. խառնուրդ ընկոյզի փութը ծախեց, առանց օգուտի և ֆլասի, 5 մանէթով. մէկ տեսակ ընկոյզի.

փութը 4 մանէթ արժէր, իսկ միւսինը—7: Իւրաքանչիւր տեսակից քանի փութ ընկոյզ խառնեց:

630. Երկու տեսակ չամչից 5 փութ խառնուրդ պատրաստեցին. մի տեսակ չամչի գրուանքան 15 կոպէկ արժէր, իսկ միւսինը—20: Բոլոր չամիչը առանց օգուտի և ֆլասի ծախեցին, գրուանքան 17 կոպէկով: Իւրաքանչիւր տեսակից որքան չամիչ խառնեցին:

631. Վաճառականը իւր պարտքը վճարելու համար առաջարկեց՝ կամ մէկ կտոր մահուգ, արշինը 3 մանէթ արժողութեամբ և 55 մանէթ էլ աւելիով, կամ մի ուրիշ կտոր մահուգ միևնոյն երկարութեամբ, միայն արշինը 5 մանէթ արժողութեամբ և 25 մանէթ էլ աւելիով: Վաճառականի պարտքը ինչքան էր:

632. Երկու խումբ մշակներ աշխատանքի համար փող պէտք է ստանան. առաջին խումբը բաղկացած է 15 մարդուց և աշխատել է 3 օր, երկրորդը—12 մարդուց և աշխատել է 4 օր: Երկրորդ խումբը որքան ստացաւ, եթէ որ առաջին խմբին 90 մանէթ բաժին ընկաւ:

633. Երեք եղբայր միմեանց մէջ 90 մանէթն այնպէս բաժանեցին, որ մեծ եղբօր ստացած իւրաքանչիւր 6 մանէթի փոխանակ միջնակ եղբօրը 5 մանէթ էր հասնում, իսկ փոքրին—4: Բայց յետոյ մեծ եղբայրն էլ իւր մասը փոքրերին տուեց, որոնք դորան էլ հաւասար բաժանեցին: Փոքր եղբայրներից իւրաքանչիւրը որքան փող ունեցաւ:

634. Երեք շտեմարանում 92 չետվերիկ ցորեն կայ.— երրորդի մէջ երկրորդից 15 չետվերիկով աւելի է, իսկ երկրորդումը,—առաջինից 3 անգամ աւելի: Իւրաքանչիւր շտեմարանի մէջ որքան ցորեն կայ:

635. Գիւղացին 3 ցանկապատ նորոգելու համար 96 ձող գործածեց. առաջին ցանկապատի համար՝ երկրորդից 7 անգամ աւելի գնաց, իսկ երրորդի համար—առաջին երկուսից 2 անգամ պակաս: Իւրաքանչիւր ցանկապատի համար քանի՞ ձող գնաց:

636. Կազմարարին 2 տետրակ պատուէր տուեցին՝ մէկը 48 թերթանի, իսկ միւսը—80. առաջին տետրակի թղթի և

կազմի համար նորան 27 կոպէկ վճարեցին, իսկ երկրորդի համար—35 կոպէկ: Եւրաքանչիւր տետրակի կազմը որքան արժէր, եթէ որ կազմը միևնոյն գնի և թուղթն էլ միևնոյն արժողութեան էր:

637. Ջրհորից միաժամանակ երկու ջրհանով 5 ժամ ջուր էին քաշում. առաջին ջրհանով մի ժամում երկրորդից 2 տակառ աւելի էին քաշում: Երկրորդ ջրհանով մի ժամում որքան ջուր էին հանում, եթէ որ ընդամենը 70 տակառ ջուր հանեցին:

638. Մի սպայ և մի աստիճանաւոր միաժամանակ երկու քաղաքներից ճանապարհ ընկան միմեանց հանդէպ և պատահեցան 4 ժամից յետոյ. սպայն մի ժամում աստիճանաւորից 3 վերստ աւելի էր գնում: Աստիճանաւորը մի ժամում քանի՞ վերստ էր գնում, եթէ որ քաղաքների միջի տարածութիւնը 84 վերստ է:

639. Ես մտքումս մի թիւ պահեցի. նորան աւելացրի 3, հանեցի (ստացած գումարից) 4, բազմապատկեցի (ստացած տարբերութիւնը) 5-ով, բաժանեցի (ստացած արտադրեալը) 6-ով և ստացայ 10: Մտքումս ի՞նչ թիւ էի պահել:

640. Մտքումս մի թիւ պահեցի. դորանից հանեցի 5, աւելացրի (ստացած տարբերութեանը) 7, բազմապատկեցի (ստացած գումարը) 9-ով, բաժանեցի (ստացած արտադրեալը) 11-ով, և ստացայ 9: Ի՞նչ թիւ էի պահել մտքումս:

641. Մտքումս մի թիւ պահեցի. նորան բազմապատկեցի 12-ով, աւելացրի (ստացած արտադրեալին) 25, հանեցի (ստացած գումարից) 37, բաժանեցի (ստացած տարբերութիւնը) 8-ով և ստացայ 6: Ես մտքումս ի՞նչ թիւ էի պահել:

642. Մտքումս մի թիւ պահեցի. նորան բաժանեցի 17-ով, աւելացրի (ստացած քանորդին) 28, հանեցի (ստացած գումարից) 19, բազմապատկեցի (ստացած տարբերութիւնը) 5-ով և ստացայ 65: Ես մտքումս ի՞նչ թիւ էի պահել:

643. Մտքումս մի թիւ պահեցի. բազմապատկեցի նորան 13-ով, աւելացրի 14, բաժանեցի 6-ով, հանեցի 9 և ստացայ 2: Ես ի՞նչ թիւ էի պահել մտքումս:

644. Ես մտքումս մի թիւ պահեցի, նորան բաժանեցի 19-ով, աւելացրի 7, բազմապատկեցի 7-ով, հանեցի 57 և ստացայ 27: Ի՞նչ թիւ էի մտքումս պահել:

645. Մտքումս մի թիւ պահեցի. նորանից հանեցի 34, բազմապատկեցի 5-ով, աւելացրի 5, բաժանեցի 5-ով և ստացայ 12: Ես ի՞նչ թիւ էի մտքումս պահել:

646. Մտքումս մի թիւ պահեցի. նորան բազմապատկեցի 4-ով, հանեցի 28, աւելացրի 24, բաժանեցի 16-ով և ստացայ 6: Ես ի՞նչ թիւ էի մտքումս պահել:

647. Ես մտքումս մի թիւ պահեցի. նորան աւելացրի 18, բազմապատկեցի 3-ով, բաժանեցի 9-ով, հանեցի 5 և ստացայ 4: Ի՞նչ թիւ էի մտքումս պահել:

648. Մտքումս մի թիւ պահեցի, նորան բաժանեցի 3-ով, հանեցի 11, բազմապատկեցի 5-ով, աւելացրի 7 և ստացայ 97: Ես մտքումս ի՞նչ թիւ էի պահել:

ԱՄԵՆՍՀԱՍՍՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ:

649. Մի արշին չիթը 12 կոպէկ արժէ: Որքան կ'արժենայ կէս արշինը:

650. Մի փութ ալիւրից 52 գրուանքայ հաց է դուրս գալիս: Որքան հաց դուրս կըգայ բաւորդ փթից:

651. Մեքենայի անիւը կէս ժամում 36 պտոյտ է անում: Քանի՞ պտոյտ կանէ մի ժամում:

652. Մի չեռվերիկ ցորենի ութերորդ մասից՝ աղալիս 5 գրուանքայ ալիւր է ստացւում: Որքան ալիւր կ'ստացուի մի չեռվերիկից:

653. Երեք քառորդ արշինը քանի՞ վերշոկ է:

654. Հինգ ութերորդ արշինը քանի՞ վերշոկ է:

655. Երեք քառորդ գրուանքան քանի՞ մսխալ է:

656. Եօթը տասներորդ մանէթը քանի՞ կոպէկ է:

657. Երեք քառորդ մանէթը քանի՞ կոպէկ է:

658. Երկաթուղու գնացքը մի ժամում 28 վերստ է կըտրում: Նա քանի՞ վերստ կըկտրէ երեք քառորդ ժամում:

- 659. 24 մեղրամուրը մի գրուանքայ է քաշում: Հինգ ութերորդ գրուանքան քանի՞ այդպիսի մուսեր կ'ունենայ:
- 660. Գտնել 45-ի չորս հինգերորդ մասը:
- 661. Գտնել 48-ի հինգ—վեցերորդը:
- 662. Գտնել 72-ի եօթը տասներկու երրորդը:
- 663. Երեք քառորդ գրուանքայ ձեթը 21 կոպէկ արժէ: Ինչքան արժէ քառորդ գրուանքան և յետոյ էլ մի գրուանքան:
- 664. Հինգ ութերորդ չեռվերիկ սխեռը 25 գրուանքայ է քաշում: Որքան կըքաշէ մի չեռվերիկը: Որքան կըքաշէ 2 չեռվերիկը:
- 665. Երեք քառորդ արշին բանուածքը 15 կոպէկ արժէ: Որքան արժէ երեք արշինը:
- 666. Գտնել այն թիւը, որի $\frac{2}{3}$ -ը 30 է:
- 667. Գտնել այն թիւը, որի $\frac{5}{6}$ -ը 35 է:
- 668. Գտնել այն թիւը, որի $\frac{7}{12}$ -ը 49 է:
- 669. Գիւղացին 15 մանէթ ունէր. այդ փողի $\frac{1}{4}$ -ով նա մի վերնազգեստ գնեց: Վերնազգեստի համար սրբան վճարեց:
- 670. Մի գիւղացի իւր ցանած հողից 36 չեռվերիկ կարտոֆիլ հանեց. այդ կարտոֆիլի $\frac{1}{8}$ -ը նա սերմնացուի համար պահեց: Սերմնացուի համար պահածը որքան կարտոֆիլ էր:
- 671. Ատաղձագործը իւր աշխատանքի վարձ $1\frac{1}{2}$ մանէթ ստացաւ. այդ փողի կէսը նա ճաշի վարձ տուեց: Ճաշի համար սրբան վճարեց:
- 672. Մի երեխայ պարանը երկու կտոր արեց. մի մասը դուրս եկաւ $\frac{1}{2}$ արշին, իսկ միւսը $\frac{1}{4}$: Պարանը ինչ երկարութիւն ունէր:
- 673. Իւղամանի մէջ $\frac{1}{2}$ գրուանքայ իւղ կար. նորանից $\frac{1}{4}$ գրուանքայ վերցրին: Որքան իւղ մնաց իւղամանում:
- 674. Մի գաւազանի երկարութիւն $1\frac{1}{4}$ արշին է, իսկ միւսինը $\frac{3}{4}$: Առաջին գաւազանը երկրորդից որքանով է երկար:
- 675. Աշակերտը դասի ժամանակ $\frac{1}{4}$ ժամ կարդաց, $\frac{1}{2}$ ժ. խնդիր լուծեց, իսկ մնացած ժամանակն էլ թելադրութեամբ գրութիւն արեց: Նա որքան ժամանակ թելադրութեամբ գրեց, եթէ որ գասը մի ժամ տուեց:

- 676. Գիւղացին առաջ $\frac{1}{4}$ գրուանքայ թէյ գնեց, իսկ յետոյ— $\frac{1}{8}$ գրուանքայ: Նա որքան թէյ գնեց:
- 677. Գիւղացին մի ջուալի մէջ $3\frac{3}{4}$ չեռվերիկ ցորեն ածեց, իսկ միւսի մէջ $3\frac{1}{2}$ չեռվերիկ: Նա երկու ջուալի մէջ որքան ցորեն ածեց:
- 678. Նախասենեակի քառորդ երկարութիւնը $1\frac{1}{3}$ սաժէն է, Բոնչ երկարութիւն ունի նախասենեակը:
- 679. Պաշարի համար վերցրած ալիւրի հինգերորդ մասը $3\frac{1}{4}$ գրուանքայ է: Բոլոր պահեստի ալիւրը սրբան է:
- 680. $10\frac{1}{2}$ արշին կտաւը հաւասար կերպով երկու շապկի համար գործածեցին: Իւրաքանչիւր շապկին ինչքան կըտաւ գնաց:
- 681. $\frac{1}{2}$ գրուանքայ թէյը քանի՞ օր կըբաւականանայ, եթէ որ օրէնը $\frac{1}{16}$ գրուանքայ գործածեն:
- 682. Արհեստաւորը $\frac{1}{2}$ գրուանքայ արծաթից հաւասար քաշով 8 գգալ շինեց: Իւրաքանչիւր գգալ որքան է քաշում:
- 683. 5 գրուանքայ բրդից ջանի՞ զոյգ գուլպայ դուրս եկաւ, եթէ որ իւրաքանչիւր զոյգի համար $\frac{1}{4}$ գրուանքայ բուրդ գնաց:
- 684. 30 արշին քաթանից քանի՞ սաւան դուրս եկաւ, եթէ որ ամեն մի սաւանի համար $2\frac{1}{2}$ արշին քաթան գնաց:
- 685. Ուսուցիչը 3 դիւժին գրիչ գնեց, ամեն մի գրիչը $\frac{1}{4}$ կոպէկով: Նա բոլոր գրիչներին սրբան վճարեց:
- 686. Երկու գրուանքայ աղը 5 կոպէկ արժէ: Որքան կարժենայ 7 գրուանքան:
- 687. Երկու արշին ժապաւէնը 3 մանէթ արժէ: Որքան կ'արժենայ 5 արշինը:
- 688. $6\frac{3}{8}$ գրուանքայ մանածը հաւասար կարժեր արին, իւրաքանչիւրը $\frac{1}{3}$ գրուանքայ ծանրութեամբ: Ընդամենը քանի՞ կարժ դուրս եկաւ:
- 689. Ուսուցիչը մի գիրք $1\frac{1}{2}$ մանէթով գնեց, իսկ միւսը $2\frac{1}{4}$ մանէթով և գրավաճառին տուեց մի հատ տասը մանէթանոց: Նա որքան փող յետ ստացաւ:
- 690. Մեծ քոյրը $3\frac{3}{4}$ գրուանքայ թել մանեց, իսկ փոքրը— $\frac{3}{8}$: Երկու քոյրը միասին որքան թել մանեցին:

691. Մի գրուանքայ տաւարի միսը $12\frac{1}{2}$ կոպէկ արժէ: Որքան արժէ 7 գրուանքան:

692. $12\frac{1}{2}$ գրուանքայ հացը հաւասարապէս 4 բանուորներին բաժանեցին: Ամեն մի բանուոր որքան հաց ստացաւ բաժին:

693. Վառապանը իւր ձիանների համար 4 օրում հաւասար կերպով $18\frac{1}{2}$ չետվերիկ գարի գործածեց: Նա օրէնը ինչքան գարի էր տալիս ձիաններին.

694. Պաստառագործը երկու գահաւորակ ծածկելու համար հաւասարապէս $25\frac{3}{4}$ արշին պաստառ գործածեց: Իւրաքանչիւր գահաւորակի համար որքան պաստառ գնաց:

695. Ատաղձագործը $\frac{3}{4}$ սաժէն երկարութիւն ունեցող տախտակը 4 հաւասար մասն արեց: Իւրաքանչիւր մասն ի՞նչ երկարութեան գուրս եկաւ:

696. Տանտիկինը $\frac{3}{4}$ գրուանքայ բրինձ ունէր. դորա կէսը նա փլաւի համար գործածեց: Որքան բրինձ գնաց փլաւին:

697. Գիւղացին մի ձի գնեց $36\frac{1}{4}$ մանէթով, իսկ մի կով էլ՝ $24\frac{1}{2}$ մանէթով: Չին կովից որքանով թանգ եղաւ:

698. Բեռնակիր նաւը 24 ըսպէտում ինչքան տարածութիւն անց կրկենայ, եթէ որ նա մի ըսպէտում $\frac{3}{4}$ սաժէն է գնում:

699. Մի տանտիկին $\frac{1}{2}$ գրուանքայ մեղր գնեց, իսկ միւսը՝ $\frac{3}{4}$ գրուանքայ: Նոցանից որը մեղրի համար աւելի վճարեց և քանի՞ կոպէկով աւելի, եթէ որ մեղրի գրուանքան 32 կոպէկ արժէ:

700. Սեղանի վերայ 64 հատ աղօթագրքեր և այբբենաբաններ կան դարսած. այբբենաբանների թիւը բոլոր գրքերի $\frac{9}{16}$ մասն է կազմում: Սեղանի վերայ որ գրքերն են աւելի և այն էլ որքանով աւելի:

701. Գտնել 20-ի $\frac{1}{6}$ մասը. գտնել 32-ի $\frac{1}{5}$ մասը:

702. Շոգենաւի համար $\frac{3}{4}$ ժամում 30 փութ քարածուխ է այրւում: Ո՞րքան քարածուխ կայրուի $2\frac{1}{2}$ ժամում:

703. Մի աշակերտ $\frac{5}{8}$ արշին երկարութիւն ունեցող փայտը բոլոր դասատան երկարութեամբ 20 անգամ տարաւ: Դասատունը ի՞նչ երկարութիւն ունի:

704. Երեք մշակ 96 խուրձ ցորեն հնձեցին. առաջինը բոլոր խրձների $\frac{1}{3}$ մասը հնձեց, երկրորդը՝ առաջինից երկու անգամ պակաս: Երրորդ հնձողը քանի՞ խուրձ հնձեց:

705. Մի գիւղացի կին իւր բոլոր իւղը երեք գնողի վերայ ծախեց. առաջին երկուսից—իւրաքանչիւրին $2\frac{3}{8}$ գըրուանքայ տուեց, իսկ երրորդին— $\frac{1}{2}$ գրուանքայ: Գիւղացի կինը ինչքան իւղ ունէր:

706. Մի գիւղացի կին 4 գնողի վերայ ձուաներ ծախեց. ամեն մէկին $1\frac{1}{2}$ տասնեակ տուեց, և իւրաքանչիւր հինգ ձուի համար $7\frac{1}{2}$ կոպէկ ստացաւ: Նա բոլոր ձուանը որքանով ծախեց:

707. Գիւղացին իւր պարաքի $\frac{3}{8}$ մասը, որ 42 մանէթ էր, վճարեց: Նա դարձեալ որքան պարաք ունի:

708. Տակառագործը 80 օղ ունէր. բոլոր օղերի $\frac{5}{16}$ մասը նա տակառների և $\frac{3}{8}$ մասը կիսատակառների վերայ ամրացրեց: Նորա մօտ դարձեալ քանի՞ օղ մնաց:

709. Արհեստաւորը 15 հատ պղնձեայ աշտանակներ շինեց. իւրաքանչիւր 2 աշտանակի համար նա 3 գրուանքայ պղինձ գործածեց: Բոլոր աշտանակների համար որքան պղնձ գնաց:

710. Մի գիւղացի 6 արտ ցանեց, իւրաքանչիւրում $1\frac{7}{8}$ չետվերիկ ցորեն: Նա ընդամենը ի՞նչքան ցորեն ցանեց:

711. Դերձակը $7\frac{1}{2}$ արշին մահուդից բաճկոններ կարեց. իւրաքանչիւր բաճկոնին $\frac{3}{4}$ արշին մահուդ գնաց: Նա քանի՞ բաճկոն կարեց:

712. Գործարանատէրը երկու օրով 18 տղամարդ և 9 էլ կին մշակ վարձեց. ամեն մի տղամարդուն, օրէնը $1\frac{1}{2}$ մանէթ էր տալիս, իսկ կինարմատին— $\frac{3}{4}$ մանէթ: Նա բոլոր մշակներին որքան փող պէտք է տար:

713. 50 գրուանքայ նաւթը հաւասար կերպով 16 լապտերի մէջ է ածած: Ո՞րքան նաւթ կայ 5 լապտերում:

714. Դարբինը մի երկաթի կտոր ունէր, որը 26 գըրուանքայ էր քաշում. այդ երկաթի $\frac{3}{4}$ մասից օղակներ շինեց: Նա օղակների վերայ ի՞նչքան երկաթ գործ դրեց:

715. Զրաղացպանի մօտ 20 չետվերիկ ցորեն բերին

աղալու. նա այդ ցորենի $\frac{5}{8}$ մասը աղաց: Որքան էր աղացած ցորենը:

716. Վաճառականը երկաթուղիով 2 անգամ ապրանք ուղարկեց և տանելու համար փթիխ $\frac{1}{4}$ մանէթ վճարեց: Նա ընդամենը քանի՞ փութ ապրանք ուղարկեց, եթէ որ առաջին անգամ ապրանք տանելու համար 14 մանէթ վճարեց, իսկ երկրորդ անգամ— $9\frac{1}{2}$ մանէթ:

717. Մի գիւղացի կին $47\frac{3}{8}$ արշին հորազործ շալ գործեց, իսկ միւսը՝ նորանից $19\frac{1}{2}$ արշին պակաս: Երկրորդ կինը որքան շալ գործեց:

718. Երկու գիւղից երկու կարաւան միևնոյն ճանապարհով միմեանց հանդէպ դուրս եկան և 6 ժամից յետոյ միմեանց պատահեցան. մէկ կարաւանը մի ժամուս $3\frac{3}{4}$ վերստ էր կտրոււմ, իսկ միւսը— $4\frac{1}{2}$ վերստ. Այդ գիւղերի միջի տարածութիւնը քանի՞ վերստ էր:

719. 28 մեխը $\frac{7}{8}$ գրուանքայ է քաշոււմ: Քանի՞ մեխ դուրս կը գայ $\frac{1}{2}$ գրուանքայից:

720. $\frac{3}{4}$ գրուանքայ պանիրը 45 կոպէկ արժէ: Ի՞նչքան պէտք է վճարել $1\frac{1}{2}$ գրուանքայ պանրի համար:

721. Մի արշին մահուզը $2\frac{1}{2}$ մանէթ արժէ: Որքան կ'արժենայ $6\frac{1}{2}$ արշինը:

722. Գործարանից մինչև իջևան բռնած տարածութեան $\frac{3}{4}$ մասը $1\frac{1}{2}$ վերստ է: Գործարանը իջևանից ի՞նչ հեռաւորութեան վերայ է գտնուում:

723. Ճոթավաճառը հաւասար երկարութեամբ 5 կտոր չիթ ունի: Նորա ունեցած չիթը ինչքան է, եթէ որ առաջին երկու կտորները $37\frac{1}{2}$ արշին են:

